Azg
armenian daily

4 ԱՊՐԻԼ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 61 (2029)

Ք. Քըրֆորյանը 100.000 դոլար է նվիրում Երեւանի պետհամալսարանին

Հաջորդական 2-րդ տարին ազգային մեծ բարերար Քըրֆ Քըրֆորյանի Լինսի բարեգործական հիմնադրամը 100 հազար դոլար նվիրեց պետհամալսարանին՝ Մ. Նահանգներում գործող ԵՊՀ բարեկամների միության խողովակով: Լինսի հիմնադրամի ատենապետ Ջեյմս Ալջյանին ուղղված նամակում ԵՊՀ բարեկամների միության նախագահ Վարդգես Բալյանը համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի անունից շնորհակալություն է հայտնել հիմնադրամին՝ ներկա դժվարին ժամանակներում 50-ամյա մայր կրթօջախին նեցուկ կանգնելու, նրա ակադեմիական չափանիշներն ու կրթական մակարդակը պահպանելու գործում ունեցած ներդրման համար: ԵՊՀ բարեկամների միությունը, որի խորհրդարան է երվանդ Ազատյանը, շուրջ 5 տարի է արդեն, որ նյութական միջոցներ է հանգանակում համալսարանին օգնելու նպատակով:

«ՎԱՆՈ+11» ԳՈՐԾ

Դատարանը Վանո Սիրադեղյանին կալանավորելու որոշում կայացրեց

Վանյա Սուքիասյանի կարծիքով՝ որոշումը հարկադրում է իր պաշտպանյալին թաքնվել դատարանից.

ՍԱՌԱ ՊԵՏԲՈՍՅԱՆ.

Վանո Սիրադեղյանի, Վահան Հարությունյանի եւ 10 այլ անձանց գործով ապրիլի 3-ի դատական նիստում նախագահողը ամբաստանյալ Վանո Սիրադեղյանի խափանման միջոցը փոխելու եւ կալանք ընտրելու որոշում կայացրեց: Հիշեցնենք, որ ամբաստանյալ Վանո Սիրադեղյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ տուժող Մայիս Ռաֆայելյանի եւ պետական մեղադրող Աղվան Հովսեփյանի միջնորդությունների քննարկումն ընդհատվել էր նախորդ դատական նիստում՝ Վանո Սիրադեղյանին բժշկական օգնություն ցուցաբերելու պատճառով: Երեկ Մայիս Ռաֆայելյանը պնդեց շարունակել իր միջնորդության քննարկումը, որի վերաբերյալ կարծիք պետք է հայտնեին ամբաստանյալները: Նրանցից 10-ը պնդեցին փոխել Սիրադեղյանի խափանման միջոցը՝ նրան համարելով դատավարությունը ձգձգելու միակ մեղավորը: Միայն մեկը հստակ դիրքորոշում չարտահայտեց, ավելի շուտ՝ առաջարկեց իրենց կարգավիճակը նրան հավասարեցնել:

Ամբաստանյալ Վահան Հարությունյանը հայտնեց, թե իրեն ծանոթ սցենարով է դատաքննությունն ընթանում՝ «ասում էին, թե Վանոյին ո՞վ է բռնողը, ի՞նչ գործ ունես»: Նա տեղին համարեց միջնորդությունը, միաժամանակ ավելացրեց, թե սպասելի էր, որ բացարկ կհայտնեն նախագահողին, կամ նախագահողն ինքնաբացարկ կհայտնի. «Էս մարդիկ սպասում են կկվի կանչին, կկուն չի կանչում, ա՞յ քեզ բան»:

Տես էջ 3

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

126 գիտնականների դիմումը Սենատին

Մինեսոտայի համալսարանի (ԱՄՆ) Ողջակիզման եւ ցեղասպանության ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Սթիվն Ֆայնբայը Ֆրանսիայում գործող ապրիլի 24-ի հայկական կոմիտեին է ուղարկել միջազգային համբավի արժանացած 126 գիտնականների ստորագրած դիմումների պատճենը, որի բնօրինակն ուղղված է Ֆրանսիական Սենատին: Այս մասին է հաղորդում Փարիզում լույս տեսնող «Յառաջ» օրաթերթի մարտի 21-ի համարը, որը նաեւ տեղեկացնում է, որ գիտնականների թվում են Երուսաղեմի Եբրայական համալսարանից, Հյուբեր Լողը՝ Վաշինգտոնի համալսարանից, Սեմուել Թոքը՝ Արկանզասի համալսարանից, Իրվինգ Գրինբերգը, Իրվինգ Հորովիցը եւ ուրիշներ:

Դիմումնագրում նրանք հիշեցրել են Սենատի անդամներին, որ բազմաթիվ երկրների (ինչպես օրինակ, Արգենտինայի, Բելգիայի, Հունաստանի, Լիբանանի, Ռուսաստանի, Ուրուգվայի, Վատիկանի, Կիպրոսի) խորհրդարաններ կամ ազգային ժողովներ, ինչպես նաեւ միջազգային հաստատություններ (Եվրախորհրդարան, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթահանձնախումբ) արդեն պաշտոնապես ճանաչել են հայերի ցեղասպանությունը եւ պահանջել նրանցից, որ իրենց հերթին նույնպես ճանաչեն եւ դրանով օգնեն Թուրքիային՝ հաշտվելու իր պատմության սեւ էջերի հետ:

Հ. Ե.

ԼՂՀ գլխավոր դատախազի խոսքերով, հնարավոր է, որ Սամվել Բաբայանին մեղադրանք առաջադրվի ԼՂՀ նախագահի դեմ մահափորձի գործով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 3 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ.- «Ազատ Արցախ» թերթին տրված հարցազրույցում (1.04.2000) ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանը հայտարարել է, որ հնարավոր է՝ մոտ օրերս Սամվել Բաբայանին մեղադրանք առաջադրվի ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ ահաբեկչական գործողության գործով: Նա նշել է, որ ավելի վաղ, նյութերի ուսումնասիրման արդյունքում՝ կատարված 7-8 ամիս առաջ, գեներալին մեղադրանք էր առաջադրվել հետեւյալ հոդվածներով. պաշտոնական դիրքի չարաշահում, պաշտոնական կեղծիք, հարկերի վճարումից խուսափում:

Ղուկասյանի խոսքերով, մեկ ամիս առաջ քրեական գործ է հարուցվել ԼՂՀ պաշտպանության նախկին նախարարի եղբայր, Ստեփանակերտի քաղաքապետ Կարեն Բաբայանի դեմ, որի լիազորությունները կասեցվել են՝ կապված նրա ձերբակալման հետ:

Գլխավոր դատախազը տեղեկացրել է, որ Ս. Բաբայանը, ինչպես եւ մյուս կասկածյալները, ցուցմունքներ է տալիս, եւ նրանց նկատմամբ, հակառակ մի շարք լրատվամիջոցների եւ որոշակի շրջանակների պնդումների, բռնություն չի գործադրվում: Մ. Ղուկասյանը չի բացառել, որ մոտ օրերս կփոփոխվեն խափանման միջոցները մի շարք անձանց նկատմամբ, որոնց մասնակցությունն ահաբեկչական գործողություններին չի ապացուցվի:

Ավելի վաղ արդեն ազատ են արձակվել 15 անձինք, որոնք ձերբակալվել էին ԼՂՀ նախագահի դեմ մահափորձին հանցակցության կասկածանքով:

Անկարան Հռոմին սպառնում է խզել հարաբերությունները

ՀՌՈՄ, 1 ԱՊՐԻԼ, ՏՆԱՐՔ.- Իտալական թերթերը մարտի 28-ին հրապարակել էին Թուրքիայի ներքին գործերի կազմած եվրոպական այն գործիչների «սեւ» ցուցակը, ովքեր պաշտպանում են 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:

Առաջին անգամ թուրքական «Սաբահ» թերթում տպագրված այդ ցուցակը ներառում է ութ իտալացիների, որոնցից հինգը՝ Ռամոն Մանդովանին, Վալտեր դե Շեզարիսը, Մարկո Պեննոնին, Պաոլո Շենտոն եւ Ջովանի Բիանչին Իտալիայի խորհրդարանի անդամներ են: Իտալական «Լա Ստամպա» թերթի համաձայն, «սեւ» ցուցակը Թուրքիայի առաջին արձագանքն է հայոց ցեղասպանության ճանաչմանը նպատակաուղղված Իտալիայի քայլերին: Թերթը նշում է, որ այդ ցուցակը հրապարակվել է իտալաթուրքական հարաբերությունների առանձնահատուկ պահին: Մի քանի շաբաթ առաջ Հռոմի Քաղաքական խորհուրդը քվեարկեց հօգուտ 1915 թվականի հայոց ցեղասպանության ճանաչման: Խորհրդի անդամները չէին թաքցնում Իտալիայի խորհրդարանում հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելու իրենց մտադրությունը:

Թուրքական մամուլի հաղորդումների համաձայն, Անկարան սպառնացել է Իտալիային խզել հարաբերությունները նրա հետ:

Ալիեւը կայցելի Ավստրիա

ԲԱԿՈՒ, 2 ԱՊՐԻԼ, ՏՆԱՐՔ.- Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը մոտ ժամանակներս կայցելի Ավստրիա, որը ներկայումս նախագահում է ԵԱՀԿ-ում: Այդ մասին հաղորդել է Ադրբեջանի նախագահի գործադիր աппարատակազմի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Նովրուզ Մամեդովը: Այցը նախատեսվում էր փետրվարին, սակայն հետաձգվեց Ավստրիայում իշխանափոխության առնչությամբ: Այցի գլխավոր նպատակը դարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունների անցկացումն է: Նովրուզ Մամեդովի ասելով, չափազանց կարեւոր է ԵԱՀԿ-ի, մասնավորապես, Մինսկի խմբի ակտիվացումը հակամարտության կարգավորման գործում: Բացի այդ, Վիեննայում կանցկացվեն նաեւ բանակցություններ ադրբեջանա-ավստրիական հարաբերությունների զարգացման եւ ընդլայնման շուրջ:

ՀԲԸՄ

Մասնավորեցվեց պրոկտոլոգիայի ինստիտուտը

ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 799 որոշմամբ «Պրոկտոլոգիա ԳՀԻ» պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսն այս տարվա փետրվարի 29-ին մասնավորեցվեց մրցույթով: Մրցույթի հաղթող ճանաչվեց «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ) կազմակերպությունը:

Միայն անցած տասը տարվա ընթացքում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը միլիոնավոր դոլարների օգնություն է ցույց տվել Հայաստանին: Պրոկտոլոգիայի ինստիտուտն առաջին սեփականությունն է, որ Բարեգործական ունեցավ հայրենիքում:

Ապրիլի 3-ին ՀՀ պետական գույքի կառավարման նախարար Դավիթ Վարդանյանը եւ ՀԲԸՄ նախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանը պայմանագիր կնքեցին «Պրոկտոլոգիա ԳՀԻ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մասին: Գնորդը պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր է վճարել 160.216 հազար դրամ, բացի այդ, գնորդը պարտավորվում է երկու տարվա ընթացքում 300 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ կատարել, ապահովել 190 աշխատատեղ, իսկ աշխատավարձի ֆոնդը, տարվա կտրվածքով, պետք է կազմի 36 մլն դրամ:

ՀՀ պետական գույքի կառավարման նախարար Դավիթ Վարդանյանը, կարեւորելով գործարքը, ընդգծեց, որ «Պրոկտոլոգիա ԳՀԻ» վաճառքը առողջապահության ոլորտի մասնավորեցվող առաջին հիվանդանոցն է, եւ որ ինքը, ընդհանուր առմամբ, կողմ է հիվանդանոցների մասնավորեցմանը, բացառությամբ մի քանիսի: Նախարարը հույս հայտնեց, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը չի շեղվի իր ավանդույթներից եւ հավատարիմ կմնա իր կոչմանը, իսկ հիվանդանոցը կդառնա այնպիսին, որին կձգտեն նմանվել մյուսները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Երեկ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանը քննարկեցին Հայաստանում իրականացվող Միության ծրագրերը եւ Հայաստան-սփյուռք փոխհարաբերություններին առնչվող հարցեր:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Կեցցե՞ «Միասնության» միասնությունը

Հանճարեղ մտքերը ենթակա են կրկնության. ինչքան շատ, այնքան լավ:

Ելնելով նշված դրույթից, «Հայաստանի Հանրապետություն»-ն իր ապրիլմեկյան համարում երբեմն անգամ զետեղել է հետեւյալ տողերը. «Ի՞նչ խորհրդարան, որտեղ ռամկավարներն իրենց տեղը չեն գտնում արդեն որերորդ ընտրությունից հետո: Սա ի՞նչ երկիր է, ի՞նչ ոչեսականություն, ի՞նչ անգիտակից ընտրողներ են... Ինչպես կարելի է ...»: Հարգելի գործընկերներ, չի կարելի այդքան ծանր մեղադրանք ներկայացնել մի մարմնի որակական կազմին, որը Ձեր թերթի հիմնադիրն է: Գտնում եմ, որ խորհրդարանում թե՛ 1995 թվականի «փայլուն» եւ «ժողովրդավար» ընտրություններից հետո եւ թե՛ 1999 թ. մայիսի արդյունքներով այնուամենայնիվ ռամկավարներ, այսինքն դեմոկրատներ կան: Նրանց թվաքանակն ուղիղ հարաբերությամբ համաչափասխանում է ռամկավարական, այսինքն դեմոկրատական ճանապարհով ընտրվածներին: Դժվար է պատկերացնել, որ ռամկավար հանդիսացող պատգամավորը ընտրված լինի հակառամկավարական ճանապարհով՝ կաշառելով ընտրողներին, վախեցնելով, կեղծելով բյուլետենները եւ էվեարկության արդյունքները, եւ, վերջապես, օգտագործելով ազգային, ինչպես նաեւ թաղային հեղինակություններին:

Հետեւաբար ռամկավար պատգամավորները ճիշտ այնքան են նախորդ եւ ներկա խորհրդարաններում, որքան նրանք, ովքեր չեն դիմել նշված միջոցներին:

Սիրելի գործընկերներ «ՀՀ»-ից, «Ազգ»-ի խմբագրականն ամենեւին չէր հետաքրքրում, ինչպես Դուք եք գրում, «խորհրդարանական մեծամասնությունը» վարկաբեկելու նպատակ: Մենք պարզապես արձանագրել էինք այն, ինչը շրջանառվում է հենց Ազգային ժողովի միջանցքներում եւ գրասենյակներում, այդ թվում, զգույշ, նորից չգայթակղվեք, միասնական «Միասնության» ներսում:

Դուք միանգամայն իրավացի եք՝ կան մնայուն արժեքներ, օրինակ՝ «ՀՀ» օրաթերթը: Ուղղակի զմայլված ենք «ՀՀ»-ի անհանդուրժողականությամբ լրագրողական պատվերների կապակցությամբ: Հասկանում ենք, պարզվում է համար է: Սակայն, սիրելի գործընկերներ, Հայաստանում տարիներ շարունակ լույս է ընծայվում մի թերթ (հարկատուների հաշվին), որը բոլորովին ոչ հեռու անցյալում աստվածացնելով ՀՀՇ-ն եւ «Հանրապետություն» միավորումը (հիշո՞ւմ եք, կար այդպիսին), ցեխի հետ էր փորձում խառնել ազգային ավանդական կուսակցությունները, նրանցից մեկին մեղադրում ամենամեծ ոճրագործությունների մեջ, մյուսին՝ հակապետականության մեջ, արդա շաս ծկում անցում կատարելով, մեկ օրում դեռի երկրապահը, հետակ գիծ որդ՝ չրելով 1998 թվականի նախագահական ընտրություններում, հիմա ամենայն ուշադրություն է հանդես բերում «Միասնության» միասնության գծին հայ ժողովրդին փոսից հանելու համաժողովրդական գործում:

Իրականում «Ազգ»-ի խմբագականն այդ եւ նման մնայուն «սկզբունքային» եւ «հետեւողական» արժեքներին էր ուղղված: Իսկ ինչ վերաբերում է «Միասնության» միասնությանը, քավ լիցի, չենք կասկածում, իրապես հավատում ենք, նույնիսկ ապրիլի 4-ին:

ԳԵՂԱՄ ՍՈՒՐԵՆՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

Տխուր խոստովանություն

Ի՞նչ է նշանակում ՀՀ նախագահի վերջին հրամանագիրը

Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի մարտի 31-ի «ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործունեությունը համակարգելու մասին» հրամանագիրը անձամբ ինձ համար, անկեղծորեն խոստովանում եմ, ոչ հաճելի անակնկալ էր: Ոչ հաճելի այն առումով, որ այդ հրամանագիրն այլ բան չէ, քան մի տխուր խոստովանություն, թե մինչեւ այժմ, արդեն ինը տարի գոյություն ունեցող պետության մեջ, կանոնակարգված չի եղել... արտաքին քաղաքական ոլորտը: Պարզ ասած, պետական իշխանության մարմինները (եւ ոչ միայն նրանք) իրենց խելքը կտրածի սահմաններում, ով ինչպես կարողացել հարաբերվել են արտաքին աշխարհին, վարել բանակցություններ, կատարել ընդունելություններ, արել կամ ընդունել հրավերներ եւ այլն, եւ այլն: Ընդսմին, նախագահի հրամանագրից կարելի է մակաբերել, որ շաս դեպքերում աջ ձեռքը չի իմացել, թե ինչ է անում ձախը, այսինքն արտգործնախարարությունը շրջանցվել է:

Օրինակ, հրամանագրի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը պարտավորեցնում է արտասահման մեկնած գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներին, պատվիրակությունների եւ մասնագետների խմբերի ղեկավարներին՝ «իրենց գործունեությունը համաձայնեցնել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի հետ, նրան տեղեկացնել իրենց գործունեության մասին»: Այսինքն ի՞նչ: Մինչեւ հիմա չե՞ն տեղեկացրել: Եթե այո, դա արդեն, կներեք, խայտառակություն է:

Պակաս տարօրինակ չէ հրամանագրի 6-րդ կետի 1-ին պարբերությունը, որը սահմանում է. «Բարձր մակարդակի արտասահմանյան պատվիրակությունների (պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների բարձրագույն պաշտոնատար անձանց) Հայաստանի Հանրապետություն հրավիրելու վերաբերյալ առաջարկները համապատասխանաբար ներկայացվում են ՀՀ նախագահին եւ ՀՀ վարչապետին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելով»: Ինչպե՞ս հասկանալ: Ով երբ ուզել եւ ում ուզել Հայաստանի Հանրապետություն է հրավիրել՝ առանց նախապես ՀՀ նախագահի եւ ՀՀ վարչապետի հետ համաձայնեցնելո՞ւ: Կամ միգուցե այս հրավերներից արտգործնախարարությունը տեղյակ չի՞ եղել:

Հրամանագիրը պարունակում է այսպիսի 11 կետ, որոնցից առնվազն 10-ը տարակուսանք են հարուցում: Միջազգային իրավունքի կամ պետական դիվանագիտական արարողակարգի մասնագետ չեմ, սակայն տարրական տրամաբանությունը հուշում է, որ այն ամենն, ինչ նոր միայն իր հրամանագրով սահմանում է ՀՀ նախագահը, վաղո՞ւց պետք է գործող կարգ լիներ պետության մեջ: Եթե այդ կարգը կար, հապա հրամանագիրն ինչի՞ համար է: Եթե չկար, ապա ի՞նչ անուն տալ մեր պետության... կարգ ու կանոնին:

Վերջում կուզենայի հայտնել եւս մի տարակուսանք: Հրամանագրով իրավացիորեն բարձրացնելով արտգործնախարարության դերը, նախագահը, չգիտես ինչու, հարկ է համարել առանձին կետով (10-րդ) ընդգծել, թե «կատարման վերահսկողությունը դրվում է» ՀՀ նախագահի աշխատակազմի վրա (հասկացիր՝ Սերժ Սարգսյանի): Արտաքին քաղաքականությունը, ըստ Սահմանադրության, վարում է նախագահը: Հասկանալի է, որ արտաքին քաղաքականության վարման գործում գործադիր իշխանության մարմինների գործունեությունը համակարգելն էլ նախագահի իրավասությունն է, եւ նա այդ կարող է անել, բնականաբար, իր աշխատակազմի միջոցով: Կոնկրետ ո՞ւմ՝ կարեւոր չէ: Այդ դեպքում ինչո՞ւ հատուկ մատնացույց անել... սեփական աշխատակազմը: Նորից կրկնեմ բորբոքելո՞ւ...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ամրագրանքով տպագրվածին

«Ազգի» մարտի 31-ի համարում տպագրված «Արժեզրկում» վերնագրով խմբագրական հոդվածը ընթերցողների շրջանում լայն արձագանք գտավ: Ուրբաթ, ամբողջ օրվա ընթացքում խմբագրությունը ստացավ բազմաթիվ հեռախոսազանգեր. շատերն իրենց գոհունակությունն էին արտահայտում տպագրվածի համար, իսկ ոմանք ցավ արտահայտում կոչ ոճի եւ մի շարք վիրավորական արտահայտությունների համար՝ չզլանալով մատնանշել, որ այդ ոճը յուրահատուկ չէ մեր թերթին: Բնականաբար, հոդվածը առաջացրել էր ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի դժգոհությունը, որը հաջորդ օրն իր մոտ հրավիրեց թերթի գլխավոր խմբագիր Հ. Ավետիսյանին՝ զրույցի: Վերջինիս հետ կես առ կես անդրադառնալով տպագրվածին, պրն Խաչատրյանը շեշտեց, որ ինքը դեմ չէ, ընդհակառակը՝ բաց է տեղին քննադատության առջեւ: Սակայն նշեց, որ անընդունելի է համարում հոդվածի մի շարք արտահայտություններ: «Ազգի» խմբագիրն ընդունեց, որ հոդվածի առնվազն մեկ արտահայտությունը բոլորովին դուրս է գալիս քննադատության սահմաններից եւ կրում է վիրավորական բնույթ, ինչի համար խոր ափսոսանք հայտնեց պրն Խաչատրյանին: Այնուհետեւ զրույցը շարունակվեց ավելի ընդհանուր թեմաներով: Պրն Խաչատրյանը մասնավորապես խոսեց Աժմամուլ լրատվական եւ իրազեկման աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու իր ծրագրերի մասին, ինչը ողջունվեց «Ազգի» խմբագրի կողմից:

Էրեբունու բացվող ոսկեգործություն-2000 միջազգային ցուցահանդես-վաճառքը

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հայաստանի ոսկեգործների եւ ակնագործների միությունը ապրիլի 2-5-ը Երեւանում կազմակերպել է «Ոսկեգործություն-2000» միջազգային ցուցահանդես վաճառք: Ցուցահանդես-վաճառքին մասնակցում է 21 կազմակերպություն, այդ թվում 7-ը արտասահմանյան: Նրանք ներկայացրել են ոսկերչական իրեր, թանկարժեք, կիսաթանկարժեք եւ արհեստական քարեր, ժամացույցներ, գեղարվեստական իրեր, բիժուտերիա եւ զարդեղեն, ինչպես նաեւ սարքավորումներ:

Ցուցահանդեսի կազմակերպմանն աջակցել են Երեւանի ոսկերչական գործարանը, «Կրեդիտ Երեւան» բանկը, Հայաստանի դիզայներների միությունը, «Ինֆոկոմ» ընկերությունը եւ «Անի պլազա» հյուրանոցը: 2000 թ.-ի ցուցահանդես վաճառքը թվով երրորդն է: Նախորդ ցուցահանդեսների ժամանակ կնքվել են 40 մլն դոլարի պայմանագրեր եւ առեւտրային գործարքներ: 1999 թ. վարչապետի որոշմամբ ոսկեգործության միջազգային ցուցահանդես-վաճառքները դարձել են ամենամյա:

Փողոցային առեւտրի, ջրամատակարարման, տրանսպորտի եւ այլ հարցերի ճակատագիրը՝ Երեւանի քաղաքապետի որոշումներում

Երեւանի քաղաքապետարանում տեղի էր ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որի արդյունքների մասին երեկ լրագրողներին տեղեկացրին քաղաքապետի խորհրդական Սուրեն Սուրենյանցը եւ կոմունալ տնտեսության վարչության պետ Հովհաննես Ահարոնյանը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, վերջերս պատշգամբ է արվել քաղաքապետարանի տրանսպորտային վարչության պետ Ժիրայր Սարգսյանը, որի աշխատանքն անբավարար էր գնահատվել Ալբերտ Բազեյանի կողմից: Կադրային այս փոփոխությանն անդրադարձավ քաղաքապետի խորհրդականը եւ նշեց, որ վարչության նախկին պետի հասցեին բազմիցս քննադատություն է հնչել լրատվամիջոցներով եւ բողոքներ՝ հասարակայնության կողմից: Դժգոհության նյութը երթուղային տախտակներն են, որոնց անօրինական գործունեության կանխարգելման հարցը ոչ մի կերպ չի վճռվում. ըստ վարչության նոր պետ Արամազդ Չաքարյանի տվյալների՝ 300 երթուղային տաքսիներ այսօր երթեւեկում են՝ առանց իրավունքի: Վերջերս է նշանակվել նաեւ մշակույթի վարչության պետը, որի աշխատանքը արդյունավետ գնահատվեց քաղաքապետի խորհրդականի կողմից. մշակույթի վարչության հովանու ներքո ստեղծվել է «Երեւանի մշակույթի կենտրոն» կոչված կառույցը, որն արդեն կազմակերպում է բազմաբնույթ միջոցառումներ:

Կադրային հարցերից անցնելով խորհրդակցության ընթացքում քննարկված խնդիրներին ու դրանցից բխած որոշումներին՝ խորհրդականը տեղեկացրեց, որ քաղաքապետը մի քանի կարգադրություններ է արել: Մասնավորապես, հերթական անգամ բարձրացվել է փողոցային առեւտրի հարցը. քանի որ քաղաքապետն ի սկզբանե աներկբա դիրքորոշում է ունեցել այդ երեւույթի հանդեպ, այդ հայտարարել է, որ շարունակելու է հետեւողական լինել մանրավաճառների հարցում: Սակայն քանի որ արգելքն անգործության է մատնելու մեծ թիվ կազմող մանրավաճառներին՝ քաղաքապետները ներկայացրել են իրենց ծրագրերը, թե որ տարածքներն են տրամադրելու փողոցային առեւտրականներին՝ քաղաքակիրթ առեւտուր ծավալելու համար: Քաղաքացիների դժգոհությունը հիմք ընդունելով՝ Ալբերտ Բազեյանը հանձնարարել է զբաղվել եւս մի հարցով, որը նույն փողոցային առեւտրի տարատեսակ՝ ծայրերիգների բացօթյա վաճառքն է: Բնակչության անդորրը չխանգարելու համար տրաստարկման օբյեկտներում կենդանի եւ ծայնագրված երաժշտության տարածումն այսուհետ կանոնակարգվելու է:

Կանոնակարգման է ենթարկվելու նաեւ հեղուկ գազի վաճառքը, քանի որ, ինչպես նշեց խորհրդականը, մտահոգություն են հարուցում վաճառակետերի անվտանգության խնդիրները. 82 գործող լցակայաններից 32-ն այսօր անօրինական են: Եղանակի տաքացման հետ մեկտեղ հեղուկ գազի վաճառակետերի վրա հսկողությունն էլ է ուժեղանալու, եւ, առանց անհրաժեշտ փաստաթղթերի, վաճառքը չի թույլատրվելու:

Քաղաքի բարեկարգմանն առնչվող այլ միջոցառումների թվում նախատեսվում են ծառատունկ (որն ընթանում է ապրիլի 1-ից, իսկ ապրիլի 8-ին տեղի կունենա համաքաղաքային շաբաթօրյակ) եւ ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ (դրանք արդեն ընթանում են Երեբունի եւ Աջափնյակ համայնքներում):

Կոմունալ տնտեսության վարչության պետի խոսքերով՝ իր ղեկավարած համակարգը մինչ վերջերս ամենաանմխիթար վիճակում էր, քանի որ նյութական մեծ ներդրումներ պահանջող ոլորտն է ջրամատակարարում, ջեռուցում, հեղեղատներ, աղբահանում եւ այլն: Ջրամատակարարման կառավարման համակարգը սեփականաշնորհվեց եւ հանձնվեց իտալացիների տնօրինմանը. այս կապակցությամբ Հովհաննես Ահարոնյանին հարց ուղղվեց, թե որքանո՞վ է բարելավվել վիճակը սեփականաշնորհումից հետո: Պատասխանից տեղեկացանք, որ իտալական կողմն իր պարտավորությունները սանձնելու է մայիսի 1-ից, սակայն չարժե կարճ ժամկետում մեծ արդյունք ակնկալել, հանգի համակարգում պահանջվող ծախսերի համար տրամադրված 25 մլն դոլարն այնքան էլ վճռորոշ գումար չէ՝ իրական ծախսերի չափը հաշվի առնելով: Ջրամատակարարման ոլորտը եւս մի ցավոտ հարց ունի՝ բնակչության վճարունակությունը ցածր է. վերջին տվյալներով՝ այդ թիվը կազմում է 16,8 տոկոս:

Քաղաքապետը համապատասխան կարգադրություն էր արել նաեւ Երեւանի տարածքում գտնվող գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքներով՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների միայն 48 տոկոսն է ըստ նպատակի օգտագործվում, իսկ մնացած տարածքը բարձրոդի վիճակում է՝ ոռոգման համակարգի կամ ջրամատակարարման վատթար պայմանների պատճառով: Խնդիրը կարգավորելու նպատակով նախատեսվում է գյուղատնտեսական նշանակության կատեգորիայից դուրս համարել որակազրկված հողերը, արդա կազմակերպել դրանց օգտագործումը պիտանիության սահմաններում: Հակողություն է տարվելու նաեւ այդ հողերում աղտոտման կանխելու ուղղությամբ:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Գլխավոր եւ հիմնադիր «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia; 375010

ԱԶԳ
hrwsum

Երեկ խորհրդարանը ալեկոծ էր, իններորդ ալիքը, սակայն, սղասվում է այսօր: Հանրաքեսության դասախազն այսօր խորհրդարանին կներկայացնի միջնորդություն Վանո Սիրադեղյանին պատգամավորական անձեռնմխելիությունից առժամանակ զրկելու եւ խափանման միջոցը կալանք որոշելու մասին: Երեկ դասարանն արդեն տվել էր իր համաձայնությունը: Պատգամավորների շրջանում արբնացավ դելփյան գուշակը. ոմանք կանխատեսում էին, որ այսօր խորհրդարանում կարող է քվորում չլինել, եւ Վանո Սիրադեղյանի հարցը կհետաձգվի: Մի պահ լուրեր տարածվեցին, որ Վանո

Դատախազը այսօր կգա ԱԺ՝ Վանո Սիրադեղյանի կալանման առաջարկով

Որքանո՞վ է պատրաստ խորհրդարանը վճիռներ կայացնելու Տապալվեց բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործը

Սիրադեղյանին ձերբակալել են 96 ժամով, որպեսզի կանխեն հանրաքեսությունից հեռանալու նրա հնարավոր փորձերը, սակայն ավելի ուշ, ԱԺ պաշտպանության ՆԳ եւ ԱԱ հարցերի հանձնաժողովի շահագրգիռ պատգամավորներն «Ազգին» հայտնեցին, թե ուժեղացրել են Վանո Սիրադեղյանի տան եւ հանրաքեսությունից դուրս տանող բոլոր ճանապարհների հսկողությունը, իրավապահ բոլոր մարմիններին ցուցում է տրված կասեցնել Վանո Սիրադեղյանի փորձն օդանավակայանով կամ այլ ուղիով հանրաքեսությունը լքելու: Կալանման վերաբերյալ ԱԺ-ում 2 տեսակետ կար. ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը, որին դիմեց «Ազգը», նշեց, որ անկախ անձերից՝ Հայաստանում պետք է գործի օրենքը, եւ տվյալ հարցը պետք չէ դարձնել քաղաքական, սա իրավական խնդիր է, ուստի պետք է լուծվի իրավական եղանակով: Մեր երկրորդ հարցին, թե այդ ձերբակալությունը չի՞ հանգեցնի Վանո Սիրադեղյանի կողմից հեռուն գնացող հայտարարությունների, եւ չի՞ բերի Հայաստանում իրավիճակի աղակայունացման (չմոռանանք, որ Վանո Սիրադեղյանի դատավարության հիմնական պատճառ Վահան Հարությունյանի ցուցմունքներում քանիցս շեշտվել է, որ Վանո Սիրադեղյանը կատարողների շրջանակից էր, եւ պատասխանատվության պետք է ենթարկել բոլորին, ներառյալ այն ժամանակ հանրաքեսության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, ինչպես նաեւ քաղաքական վերնախավի մյուս ներկայացուցիչներին), Տիգրան Թորոսյանն ասաց. «Պետք է որոշումները, լուծումները լինեն սկզբունքային՝ անկախ անձերից, սա է կարեւորը, եթե պահպանվի այս սկզբունքը, կարծում եմ՝ մեր երկրում ամեն ինչ նորմալ կլինի: Որեւէ մեկի հայտարությունը, անկախ դրանից, թե ինչքան ցնցող է, ցնցումներ հասարակության եւ պետության մեջ չպետք է առաջ բերի: Եթե ինչ-ինչ փաստեր կամ վարկածներ հրապարակվեն, բնական է, որ դրանց վերաբերյալ պետք է լինեն համապատասխան գործողություններ իրավապահ մարմինների կողմից: Դա է ճիշտը, իրավական խնդիրները չպետք է կարգավորվեն քաղաքական լուծումներով»:

ԱԺ պետահրավական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանը հեղինակն է օրակարգում չընդգրկված օրենսդրական մի նախաձեռնության, որով փորձ էր կատարվում կարգավորել պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը՝ սկսված դատաքննության պայմաններում, նա «Ազգին» հավաստեց, որ դատախազի մուտքն ԱԺ մեկնաբանությունների տեղիք է տալու: Վիկտոր Դալլաքյանը դիվանագիտորեն չկամեցավ այդ մեկնաբանությունները կոչել շահարկում, բայց վստահաբար պնդեց, որ գործող Սահմանադրության մեջ եւ ԱԺ կանոնակարգում հակասություն կա: Ըստ կանոնակարգի՝ հանրաքեսության գլխավոր դատախազը պետք է գա ԱԺ՝ ներկայացնելու պատգամավորի անձեռնմխելիությունը դադարեցնող միջնորդագիր: Իսկ անձեռնմխելիությունից զրկել իրավասու է միայն դատարանը: Այսպիսով, եթե դատախազը գա խորհրդարան, եւ պատգամավորները նրան հարցեր ուղղեն, ապա վերջինս կարող է հրաժարվել՝ պնդելով, որ դատաքննության շրջանում գործի պատասխանատուն դատավորն է, իսկ դատավորն իր հերթին իրավասու չէ խորհրդարանում բարձրացնել անձեռնմխելիությունից զրկելու հարցադրումը: Վիկտոր Դալլաքյանը միանշանակ էր՝ որպես պատգամավոր իրենք փորձել են հարցը կանոնակարգել, սակայն կառավարությունը բացասական էր տրամադրված օրենքի նախագծի հանդեպ: Նա կանխատեսեց Սիրադեղյանին կալանավորելու փակուղի:

Հավաստի կարող ենք արձանագրել, որ իշխանության երկու թեւերում՝ վարչապետական եւ նախագահական, չկա միասնական կարծիք Վանո Սիրադեղյանին կալանավորելու վերաբերյալ, ուստի այսօրվա զարգացումները կարող են վճռական լինել հանրաքեսության ապագայի համար:

«Կայունությունն» անկայուն է

Երեկ խորհրդարանն ակներեւ դարձրեց իր տարանջատ եւ հեղհեղուկ բնույթը. օրակարգում ՀՀ էներգետիկ համակարգի բաշխիչ ցանցերի մասնավորեցումը օրենսդրորեն կարգավորելու օրենքի նախագիծն էր: Փաստաթուղթ, որով ԱԺ իր համաձայնությունն էր հայտնում բաշխիչ ցանցերի մասնավորեցմանը, բայց ելնելով սեփականաշնորհման հայոց ծախսող փորձից՝ պատասխանատվություն էր ստանձնում գործադիր իշխանության հետ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործում հին սխալները չկրկնելու: Արթուր Բաղդասարյանի եւ այլոց օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում էր ՀՀ կառավարության ներկայացմամբ մասնավորեցման հիմնական պայմաններին օրենքի ուժ տալ, այսինքն՝ մրցութային հանձնաժողովին տվում էր լիակատար ազատություն բանակցելու ռազմավարական գնորդների հետ եւ միայն ամենավերջում, երբ պետք է ստորագրվեր առուվաճառքի պայմանագիրը, կառավարությունն իր իսկ հայեցողությամբ ամենահիմնական պայմանները պետք է ներկայացներ խորհրդարանին, ԱԺ-ն էլ օրենքի ուժ տար դրանց: Մինչ խորհրդարանական քվեարկությունը, էներգետիկայի առաջին փոխնախարար Կարեն Գալուստյանն իրավացիորեն նշել էր, որ այս նախագիծը ոչ միայն կառավարության գործունեությունն է դարձնում առավել անխոցելի, այլեւ պաշտպանում է ռազմավարական գնորդի շահերը, քանզի բացառում է հետագայում գնորդի սեփականության իրավունքի սահմանափակումը: Բայց խորհրդարանական ազդեցիկ (խոսքը վերաբերում է զուտ թվաբանակին) խումբը՝ «Կայունությունը», յուրօրինակ վճիռ կայացրեց: Քվեարկեց, եւ ընդամենը մի քանի ձայնի տարբերությամբ նախագիծը չընդունվեց: Նախագծին կողմ էին ՀՅԴ-ն, Հայկոմկուսը, «Օրինաց երկիրը»՝ կարգադրահ եւ միասնական: «Հանրապետականը» միանշանակ դեմ էր: Արձանագրելով այս փաստը՝ հիշեցնենք կոնյակի գործարանի սկիզբ առած աղմուկը. ԵԿԳ ֆրանսիական տնօրինության ղեկավար Պիեռ Լարեյը հրաժարվում է կոնյակի գործարանի սեփականության իրավունքից՝ վկայակոչելով մեր կառավարության կողմից իր՝ իբրեւ սեփականատիրոջ իրավունքների խախտումները, ուստի մեր բաշխիչ ցանցերի ռազմավարական գնորդին խորհրդարանը չուրախացրեց, հակառակը: Իսկ «Կայունությունը»՝ հանձին ղեկավար Վարդան Այվազյանի, կովից հետո բռունցքները թափ տալու, կամ ճաշից հետո մանանեխ ըմբոշխնելու ցանկությամբ փորձում էր բոլորին հավաստացնել, թե իրենք պարզապես չեն հասցրել դահլիճ վերադառնալ: Պատգամավորի խնդիրը, հատկապես մեծամասնական մանդատով, որով այդքան հպարտանում է մականունաբաս «Կայունությունը», դիրքորոշում ունենալն է: Միջանցքում «Կայունության» պատգամավորները պնդում էին, որ իրենք կողմ էին, բայց գործեց հայտնի պատմությունը, երբ մոլորյալ քաղաքացին բոլորին հավաստիացնում էր, որ ինքը կարծիք ունի, բայց այդ կարծիքի հետ համաձայն չէ:

ՀՂՄ-ների կիրառումը հետաձգվեց երկու ամսով

Վերջում ավելին՝ խորհրդարանի առջեւ խմբված հարյուրավոր տխրադեմ կրպակատերերին ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի շուրթերով տեղեկացվեց, որ վարչապետ Արամ Սարգսյանը, խորհրդակցելով նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, որոշել է երկու ամսով հետաձգել ՀՂՄ-ների ներդրումը մանր եւ միջին բիզնեսի ոլորտում: Հինգշաբթի գումարվող կառավարության նիստում կկատարվեն վերջին շեշտադրումները: Որքանո՞վ երկու ամիսը բավական կդառնա մեր մանր առեւտրականների համար, ցույց կտա ժամանակը:

ԷԴԳԱՐ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«ՎԱՆՈ+11» ԳՈՐԾ

Դատարանը Վանո Սիրադեղյանին կալանավորելու որոշում կայացրեց

Սկիզբը էջ 1

Նշենք, որ քննարկումը տեղի էր ունենում Սիրադեղյանի բացակայությամբ, նախագահողի հարցումին նրա դատաքննությանը պատասխանեց, թե տեղյակ չէ իր պաշտպանյալից: Սակայն, երբ նախագահողը որոշեց նիստը շարունակել անկախ Վանոյի բացակայությունից եւ նրա տեսակետը ողջունեցին մեղադրող կողմն ու տուժող Մ. Ոսֆայելյանը՝ Վանյա Սուքիասյանը շտապեց բացարկ հայտնել նախագահողին: Բավականին երկարաբուն բացարկի տեքստը Վանյա Սուքիասյանը կարող էր եւ ներկայացնել նախորդ դատական նիստում, եթե դրա առիթը լիներ: Մեր դիտարկումները պարզորոշ ցույց տվեցին, որ Սիրադեղյանի խափանման միջոցը փոխելու մտադրությանը նրանք նախապես տեղյակ էին եւ, ըստ այդմ, նախատեսել էին հնարավոր բոլոր քայլերի պատասխանները: Քանի որ նախորդ դատական նիստը հաջողվեց ընդհատել Վանո Սիրադեղյանի վատառողջության պատճառով, պաշտպանական կողմը քայլեր չձեռնարկեց: Սակայն հստակ էր, որ միջնորդության քննարկումը շարունակվելու էր, այդ իսկ պատճառով Վանո Սիրադեղյանը երեկ դատարան չներկայացավ: Համենայն դեպս, նրա դատաքննությանը դեռեւս ամեն ինչ կորած չէր համարում եւ համառում էր դատարանի հնարավոր որոշման դեմ: Նախագահողի դեմ ներկայացված գրավոր բացարկի տեքստում նա նշեց, որ մեղադրող կողմը ջանում է դատավորի վրա ներգործելով «ազնիվ պարտքի» որոշում կայացնել: Պաշտպանությունը համոզված էր, որ նախագահողի անկախությունը ներկայումս գոյություն չունի. «Անհնարին է հավատալ մի դատավորի, որն իրավացիորեն մի դեպքում չի քննարկել միջնորդությունը, մյուս դեպքում՝ քննարկում է: Նախագահողի դեմ բացարկ եմ հայտնում նրա անաչառությանը կասկածելով»:

Նախագահողը հրապարակեց որոշման տեքստը. «Դատարանը, լսելով կողմերի կարծիքը, հանգեց այն հետեւության, որ տուժող Մայիս Ոսֆայելյանի եւ մեղադրող Աղվան Հովսեփյանի միջնորդությունները ամբաստանյալ Վանո Սիրադեղյանի խափանման միջոցը փոխելու եւ նրա նկատմամբ խափանման միջոցը կալանք կիրառելու մասին՝ պետք է բավարարել»: Որոշումը կարող է ուժի մեջ մտնել ՀՀ գլխավոր դատախազի կողմից ԱԺ մտնելու եւ Վանո Սիրադեղյանին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը բավարարելու դեպքում: Նախագահողը հայտնեց, որ որոշումն այսօր եւեթ կուղարկի ՀՀ գլխավոր դատախազին: Վանո Սիրադեղյանի դատաքննությանը շարունակում էր բողոքել դատարանի որոշման դեմ՝ դժգոհելով, որ նախագահողը փորձ չարեց պարզելու՝ հարգելի՞ է Սիրադեղյանի բացակայությունը, թե՞ անհարգելի: Գտնում էր նաեւ, որ նախապես պետք է քննարկվեր նախագահողի դեմ ներկայացված իր բացարկը: Բայց քանի որ դա չարվեց, Վանյա Սուքիասյանն ընթերցեց իր հաջորդ, պահեստային տարբերակը՝ բողոքի տեքստը, որով բացարկ էր հայտնում եւ պետական մեղադրողին, եւ նախագահողին: Գրավոր տեքստում նա կատարվածը որակեց բացահայտ պատվեր, որ հարկադրում է իր պաշտպանյալին թաքնվել դատարանից: Փաստաբանը որոշակի ակնարկ արեց՝ այ, հիմա դուք այդ առիթը տվեցիք, ես չգիտեմ, թե նա ինչո՞ւ է հիմա բացակայում: Ընթերցումն ավարտելուց հետո, առանց նախագահողի թույլտվության, Վ. Սուքիասյանը լքեց դատարանի դահլիճն՝ ասելով. «Իմ պաշտպանյալի բացակայությամբ այստեղ ոչինչ չունեմ անելու»:

Նրա հեռանալուց հետո, իհարկե, բացարկները չքննարկվեցին, իսկ Աղվան Հովսեփյանը չցանկացավ անպատասխան թողնել իրեն թիրախ դարձրած պաշտպանի մեղադրանքները՝ մեկ անգամ էլ փորձելով հիմնավորել իր միջնորդության սկզբունքայնությունը: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը հիշեցրեց, որ Վ. Սիրադեղյանը նախաքննության ընթացքում մեկ անգամ արդեն գտնվել է հետախուզման մեջ՝ խոչընդոտելով նախաքննությունը: Նրա կարծիքով, դատապաշտպանի դերն այն պետք է լիներ, որ բացարկների պատրաստ տեքստերի փոխարեն մի փոքր տեղեկանքով դատարանին ծանուցեր իր պաշտպանյալի բացակայության մասին: Վանյա Սուքիասյանի բացարկի միջնորդությունը նա դատարանի նկատմամբ շանսաժ համարեց:

Տուժող Մ. Ոսֆայելյանը ողջունեց դատարանի վճռականությունը՝ երեկվա նիստը համարելով միակ լիարժեք օրը սույն դատաքննության ընթացքում, որն, ըստ նրա, միայն երկու սպանվածների դատավարություն չէ: Գտնում էր, որ դատավորի որոշումով շրջադարձային փուլ է սկսվում հանրապետությունում եւ այն, ըստ էության, դառնում է տասնյակ սպանվածների դատավարություն, հայրենիքը հարկադրաբար լքածների դատավարություն... Դատական նիստը ընդհատելով երկու օրով, նախագահողը հայտնեց, որ այն կընթանա անկախ հանրապետական դատախազության ձեռնարկելիք միջոցառումների ժամկետներից:

Վահրամ Աղաջանյանի գործը հանձնվել է դատարան

Մարտի 28-ից Ստեփանակերտում վարչական կալանքի տակ է գտնվում «10-րդ նահանգ» եւ «Իրավունք» թերթերի աշխատակից, լրագրող Վահրամ Աղաջանյանը: Նրան մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 131 հոդվածի երկրորդ մասով: Մասնավորապես լրագրողին մեղադրում են «10-րդ նահանգ» թերթի իր այն հրապարակման համար, ըստ որի վարչապետ Ա. Դանիելյանը վերաբնակեցվածներին հայտարարել է, որ կառավարությունը նրանց համար նյութական միջոցներ չունի: Գործի նախաքննությունը երեկ ավարտվել է եւ մտել դատարան: Նախաքննական մարմնի ձեռք բերած նյութերն օրենքով սահմանված կարգով 5 օրվա ընթացքում պետք է ուսումնասիրվեն եւ եթե դրանք բավարար լինեն, գործի քննությունը կսկսվի դատարանում: Վերոհիշյալ հոդվածը նախատեսում է վարչական տույժից մինչեւ 3 տարվա ազատազրկում: Բացառված չէ, որ 5 օրից Վ. Աղաջանյանի խափանման միջոցը՝ կալանքը փոխվի, եւ նա ազատ արձակվի:

ԱԱՆԵՔՍՏԱՍԻՆ

հարցազրույց

Ասոն Մելիք-Շահնազարյան. «Հայոց ցեղասպանության ճանաչումը լոկ ժամանակի հարց է»

Եվրախորհրդի հերթական միջոցառմանը մասնակցելու նպատակով Ստրասբուրգ ուղեւորված հասուկ հանձնարարությունների դեսպան Ասոն Մելիք-Շահնազարյանը Փարիզում մեր թղթակցին իր տեսակետը հայտնեց Մեծ եղեռնի 85-րդ տարելիցի նախօրեին:

– Մենք հիշում ենք, որ Դուք 1998 թ. ժնեւում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում եւ Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում «Ցեղասպանության ոճիրը կանխելու եւ դրա համար պայքարելու ՄԱԿ-ի միջազգային» 50-ամյակի առթիվ հայտնի բանաձեւերի ընդունման նախաձեռնողն էիք: Այս տարի նշում ենք Հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցը, բայց Թուրքիան դեռ հեռու է իր ոճրի ճանաչումից:

– Չպետք է մոռանալ, որ Ցեղասպանության ճանաչման կարելի է հասնել միայն պետության գործունեության շնորհիվ: Չէ՞ որ միայն պետությունը հնարավորություն ունի այս ողղությամբ միջազգային ասպարեզում իրականացնելու քաղաքական ու դիվանագիտական կոնկրետ քայլեր:

Բայց Հայաստանի Հանրապետությունը դեռ տասը տարեկան էլ չկա: Անցումային ժամանակաշրջանում հայկական պետականության կազմավորման եւ համապատասխան գերակայությունների պահպանման անհրաժեշտության հետ կապված դժվարությունների պատճառով նա դեռ չի հասցրել պատշաճ աշխատանք ծավալել: Բացի դրանից, այս ուղղությամբ ձեռնարկվող բոլոր քայլերը պետք է ուղեկցվեն համարժեք բացատրական ու քարոզչական աշխատանքով (ինչում մենք, ավա՛ղ, բավ չենք փայլում), այլապես մեր բնամիներն այդ քայլերը կգնահատեն որպես Թուրքիայի հետ հարաբերությունները բարդացնելու, եթե ոչ վատթարացնելու ձգտում:

Նախապես ընդգծում եմ, որ իմ նկատառումները զուտ անձնական բնույթ են կրում, արտահայտում լոկ իմ տեսակետը եւ բացառապես նպատակ ունեն շահագրգիռ կողմերին կոչ անել ձեռնամուխ լինելու մեր հարաբերություններում առկա արգելապատնեշի հաղթահարմանը: Իսկ դա պահանջում է բոլոր հարցերի անկեղծ քննարկում: Ներկայիս սպասուս վիճակի պահպանումը տանում է փակուղի: Ի դեպ, Թուրքիայում եւս նկատվում են որոշակի տեղաշարժեր:

Պատմական չափանիշներով Հայոց ցեղասպանության ճանաչումը հեռու չէ: Ժամանակն է ընդհուպ զբաղվել այդ հարցով, ըստ որում՝ ոչ թե հուզական մակարդակով, այլ կոնկրետ կերպով: Հայկական սփյուռքի ծառայությունն այն է, որ անընդհատ արծարծում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Բայց դա արվում է հենց հուզական մակարդակով, որտեղ առաջնությունը տրված է ցեղասպանության զոհերի՝ հայրերի ու պապերի, ինչպես նաեւ կորուսյալ հայկական հողերի հիշատակին:

Սակայն միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնորդումը Հայաստանի Հանրապետության առանձնաշնորհն է: Այդ աշխատանքը պահանջում է կոնկրետ գործողություններ, որոնց վերջնական նպատակն է պայմաններ ստեղծել տարածաշրջանում եւ աշխարհում համագործակցության ու անվտանգության հաստատման համար:

– Կոնկրետ գործողությունների մասին խոսելիս ի՞նչը նկատի ունեք:

– Չժխտել, չփորձել մոռացության տալ ակնհայտը, ինչը, ի դեպ, անհնար է ցեղասպանություն տեսած ժողովրդի հիշողության համար: Ընդհակառակը, միասին նստել սեղանի շուրջը, քննել փոխադարձ պահանջները եւ անպայման գտնել բոլոր կողմերին բավարարող լուծում:

Ըստ որում, բոլոր հարցերի առթիվ պետք է ընդունվի համապարփակ, փաթեթային լուծում, որպեսզի մեկընդմիշտ ուղի հարթվի մեր երկու ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար:

Չպետք է հաշվից դուրս թողնել այն փաստը, որ Թուրքիան նախկինում ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ավելին, նա այն ժամանակ նույնիսկ մահապատժի է դատապարտել դրա գլխավոր նախաձեռնողներին եւ իրագործողներին:

Բայց հետագայում Թուրքիան բռնեց ժխտման անպտուղ ուղին: Ուստի ավելի ծիշտ կլիներ Թուրքիայից պահանջել, որ հրաժարվի իր ժխտողական դիրքից: Այժմ տվյալ տեսակետն ընդունում են ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ, այդ թվում հենց Թուրքիայում, որի քաղաքացիները բնավ չէին ուզենա մեղադրվել իրենց հայրերի ու պապերի մեղքերի համար:

Կարծում եմ, Թուրքիայի հեռանկարային շահերը պահանջում են հնարավորին չափ շուտ հրաժարվել այսօրվա ժխտողական դիրքորոշումից, որը խանգարում է նրա եվրոպականացմանը եւ Հայաստանի ու հայերի հետ

ությունների բարելավմանը:

– Հայ-թուրքական սահմանի բացումն ըստ էության կնշանակեր Հայաստանում Թուրքիային առավել բարենպաստման ռեժիմի տրամադրում: Դա կտրուկ կբարելավեր Հայաստանին սահմանակից թուրքական շրջանների տնտեսական վիճակը եւ միաժամանակ մեր շուկան կհեղեղեր թուրքական ապրանքներով:

Չենք թաքցնում, որ Թուրքիային բարենպաստման նման ռեժիմի տրամադրումը շնորհ է, որն ավելի շատ ձեռնտու է տնտեսապես անհամեմատ հզոր Թուրքիային, քան Հայաստանին:

– Ինչպե՞ս եք գնահատում հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակը:

– Նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում դրանք կարող էին զգալիորեն ավելի բարվոք լինել, եթե Թուրքիան, որպես շրջանային գերտերություն, սեփական ազգային շահերը չենթարկեր Ադրբեջանի նավարկուղիով կուրորեն ընթանալուն, երկիր, որը չունի կայուն քաղաքական կուրս եւ արտաքին քաղաքականությամբ ցասկում է արեւելքից արեւմուտք եւ հարավից հյուսիս: Անկասկած, Թուրքիան ավելի շատ կշահեր, եթե հրաժարվեր Ղարաբաղի հակամարտության մեջ Ադրբեջանին անվերապահորեն պաշտպանելու գծից: Այդ խնդիրը վերաբերում է մեր երկու պետություններին՝ Հայաստանին եւ Ադրբեջանին: Ի դեպ, ներկայումս երեւանն ու Բաքուն սահմանված են լուծել այն հակամարտությունը, որը ժամանակին ստեղծել են Թուրքիայի նախկին կառավարիչները:

Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը ծագեց ոչ թե ԽՍՀՄ-ի փլուզման հետեւանքով, այլ 1918 թ., երբ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հավակնությունների պատճառով Ազգերի լիգան Ղարաբաղը հայտարարեց «վիճելի» տարածք եւ հարցը հետաձգեց մինչեւ Փարիզի խորհրդաժողով: Բաքուն համաձայնեց այդ որոշմանը՝ ընդունելով այդ տարածքի «վիճելի» կարգավիճակը: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո Բաքուն հայտարարեց, որ Նախիջեւանն ու Լեռնային Ղարաբաղը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասեր, որը 1918–1920 թթ. անկախ պետություն էր Ադրբեջանի նման: Ճիշտ է նաեւ, որ Ադրբեջանն այն ժամանակ առաջարկեց ճանաչումը պայմանավորել հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդների եւ զբոսաշրջիկների մասին: Ասվելիս՝ մեր երկրների միջեւ գոյություն ունեն ուղիղ ավիաչվերթեր, ավտոբուսային հաղորդակցություն: Երեւանի շուկաները լի են թուրքական ապրանքներով:

Ի դեպ, փոխադարձ պահանջների հավալիրի քննարկման նպատակահարմարության առնչությամբ առաջինը հանդես են եկել մեր երկրների նախագահներ Ռոբերտ Քոչարյանը եւ Սուլեյման Դեմիրելը Յալթայում, 1998 թ. հիշարժան հանդիպման ժամանակ: Ես լոկ կոչ եմ անում ավելի արագ կատարել այդ առաջին կոնկրետ քայլը: Արժե՞ սպասել, թե երբ անարգանքի սյունին կգամվի մի ամբողջ պետություն, եթե կարելի է այդ լուրջ հարցը կարգավորել արդեն հիմա:

– Բայց սահմանի բացումը չէ՞ր նպաստի մեր երկու երկրների հարաբերությունների բարելավմանը:

– Հայ-թուրքական սահմանի բացումն ըստ էության կնշանակեր Հայաստանում Թուրքիային առավել բարենպաստման ռեժիմի տրամադրում: Դա կտրուկ կբարելավեր Հայաստանին սահմանակից թուրքական շրջանների տնտեսական վիճակը եւ միաժամանակ մեր շուկան կհեղեղեր թուրքական ապրանքներով:

Չենք թաքցնում, որ Թուրքիային բարենպաստման նման ռեժիմի տրամադրումը շնորհ է, որն ավելի շատ ձեռնտու է տնտեսապես անհամեմատ հզոր Թուրքիային, քան Հայաստանին:

– Ինչպե՞ս եք գնահատում հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակը:

– Նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում դրանք կարող էին զգալիորեն ավելի բարվոք լինել, եթե Թուրքիան, որպես շրջանային գերտերություն, սեփական ազգային շահերը չենթարկեր Ադրբեջանի նավարկուղիով կուրորեն ընթանալուն, երկիր, որը չունի կայուն քաղաքական կուրս եւ արտաքին քաղաքականությամբ ցասկում է արեւելքից արեւմուտք եւ հարավից հյուսիս: Անկասկած, Թուրքիան ավելի շատ կշահեր, եթե հրաժարվեր Ղարաբաղի հակամարտության մեջ Ադրբեջանին անվերապահորեն պաշտպանելու գծից: Այդ խնդիրը վերաբերում է մեր երկու պետություններին՝ Հայաստանին եւ Ադրբեջանին: Ի դեպ, ներկայումս երեւանն ու Բաքուն սահմանված են լուծել այն հակամարտությունը, որը ժամանակին ստեղծել են Թուրքիայի նախկին կառավարիչները:

Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը ծագեց ոչ թե ԽՍՀՄ-ի փլուզման հետեւանքով, այլ 1918 թ., երբ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հավակնությունների պատճառով Ազգերի լիգան Ղարաբաղը հայտարարեց «վիճելի» տարածք եւ հարցը հետաձգեց մինչեւ Փարիզի խորհրդաժողով: Բաքուն համաձայնեց այդ որոշմանը՝ ընդունելով այդ տարածքի «վիճելի» կարգավիճակը: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո Բաքուն հայտարարեց, որ Նախիջեւանն ու Լեռնային Ղարաբաղը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասեր, որը 1918–1920 թթ. անկախ պետություն էր Ադրբեջանի նման: Ճիշտ է նաեւ, որ Ադրբեջանն այն ժամանակ առաջարկեց ճանաչումը պայմանավորել հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքով:

Բայց կարճ ժամանակ անց Անկարան, օգտվելով Թուրքիայի բոլշեւիկյան ապագայի առնչությամբ կոմունիստների պատրանքային հույսերից, նպաստեց, որ Լեռնային Ղարաբաղը հանձնվի Ադրբեջանին: Դա ամենահանցանելի դանդաղ գործողության արդյունքն էր եւ վաս ծառայություն մատուցեց Ադրբեջանին:

– Ո՞րն է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների բարձր մակարդակի բանակցությունների էությունը: Դատելով մամուլ թափանցած տեղեկություններից, դրանց արդյունքները կարող են չգոհացնել հայ ժողովրդին:

– Ըստ նախագահների պայմանավորվածության, բանակցություններին առնչվող տեղեկությունները չեն հրապարակվում: Բայց ԶԼՄ-ներն իզուր են շիկացնում իրավիճակը՝ վկայակոչելով այն բանը, թե հարցը լուծվում է տարածքային փոխանակումների միջոցով՝ ի վնաս այս կամ այն կողմի ազգային շահերի: Բանակցությունների ընթացքում կողմերն իրավունք ունեն առաջ քաշել ամեն տեսակ առաջարկություններ եւ արծարծել ամեն տեսակ հարցեր, բայց դա բնավ չի նշանակում, թե պայմանավորվածություն է ձեռք բերվել: Հենց որ պայմանավորվածությունն ապահովվի, դա կներկայացվի հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների դատին:

Իսկ ինչ վերաբերում է ամենաբարձր մակարդակով վարվող հայ-ադրբեջանական անմիջական բանակցությունների բնույթին ու ֆորմատին, դրանք, իմ կարծիքով, վկայում են, որ բանակցությունների միջոցով փորձ է արվում լուծելու վաղեմի վիճելի տարածքային հարցը, ըստ որում՝ անկախ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքից:

Ադրբեջանն այլեւս չի համաձայնում այդ վեճը ենթակա դարձնել Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքին, ինչը նա կոչ էր անում 80 տարի առաջ: Ահա ձեզ ժխտողականության եւս մեկ օրինակ:

– Դա փորձ-ինչ տարբերվում է հայկական կողմի պաշտոնական դիրքորոշումից, ուստի կխնդրեի ճշգրտել, որ խոսքը Ձեր անձնական տեսակետի մասին է:

– Իհարկե, սա իմ անձնական կարծիքն է բանակցությունների բնույթի մասին, բայց իմ նկատառումները ոչ միայն չեն վնասում հայկական դիվանագիտության պաշտոնական դիրքորոշմանը, որը հիմնված է միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա, այլեւ լրացնում եւ ուժեղացնում են այն:

Ուզում եմ ընդգծել, որ եթե հակամարտությունը գնահատենք որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ 1918 թ. ծագած վեճ, ապա Ղարաբաղի հարցը չի տեղավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Ժամանակին խախտվել է ոչ թե Ադրբեջանի, այլ Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Բացի դրանից, պկնհայտ է, որ իր կամքին հակառակ սեփական տարածքով ուրիշ երկրի կազմի մեջ մտցված Ղարաբաղի բնակչությունը, որն ուզում է այդ անցանկալի երկրից դուրս գալ դարձյալ սեփական տարածքով, չի խախտում որեւէ մեկի տարածքային ամբողջականությունը:

– Վերադառնանք մեր խոսակցության գլխավոր թեմային՝ Հայոց ցեղասպանության հարցին:

– Շնայած Թուրքիային սփյուռքահայերի ներկայացրած տարածքային պահանջներին, հարկավոր է իրատես լինել եւ գիտակցել, որ դրանք գրեթե անիրագործելի են: Ճիշտ է, Թուրքիան առանց դժվարության կկարողանար ցեղասպանության զոհերի զավակներին ու թոռներին իրավունք տալ վերադառնալու եւ բնակվելու հայրենի հողում: Բայց, կարծում եմ, հազիվ թե շատերը վերադառնան, այն էլ մեկընդմիշտ:

Դրա հետ մեկտեղ ինձ համար միանգամայն պկնհայտ է, որ Թուրքիան կկարողանար Հայոց ցեղասպանության ժխտումից հրաժարվել լոկ այն դեպքում, եթե նախօրոք իմանար, թե հետագայում ինքը տարածքային, ֆինանսական եւ գույքային ինչպիսի խնդիրներ է ունենալու: Սա շատ բարդ հարց է, եւ ոչ մի լուրջ քաղաքագետ հակված չի լինի Հայոց ցեղասպանությունը ճանաչել՝ նախօրոք չիմանալով այդ ճանաչման հետեւանքները:

Ահա թե ինչու կարծում եմ, որ պետք է մտածել հնարավոր պայմանավորվածությունների մոտավոր ուրվագծերի մասին:

– Իրոք, ինչպիսի՞ն կարող են լինել այդ ուրվագծերը:

– Ես դրանով հատկապես չեմ զբաղվել, բայց նույնիսկ հարցի հրապանցիկ դիտարկման դեպքում պկնհայտ է դառնում, որ Թուրքիան սխրված կլինի Հայաստանին վերադարձնել նախկին Սուրմալուի գավառի ամբողջ տարածքը հայկական սրբություններով՝ Մեծ եւ Փոքր Մասիսներով: Այս հարցը կապված չէ նախկին Արեւմտյան Հայաստանի տարածքների

հետ, բայց հայ-թուրքական հարաբերությունների բաղկացուցիչ մասն է:

Սուրմալուի գավառը Թուրքիային անցավ 1921 թ. պայմանագրով, որը հայտնի է Մոսկվայի պայմանագիր անունով, եւ նախկինում երբեմն Թուրքիային չի պատկանել: Ռուսաստանն այդ տարածքը նվաճել է Պարսկաստանից: Բացի դրանից, տարածքը մտնում էր այն ժամանակ Թուրքիայի ճանաչած 1918–20 թթ. Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության կազմի մեջ մտած հայկական հողերին, պկնհայտ է, որ Թուրքիան կարող է գոնե մի կարեւոր խորհրդանշական քայլ կատարել՝ վերադարձնելով, օրինակ, հայոց հին մայրաքաղաք Անիի ավերակները՝ այնտեղ պահպանված եկեղեցիների ու տաճարների մնացորդներով:

– Բայց թուրքերն Արարատը համարում են իրենց լեռը եւ դժվարությամբ կկարողանան դրանից բաժանվել: Բացի դրանից, տարիներ շարունակ նրանք լեռան գագաթից դիտել են նախ խորհրդային Միությունը, ապա Հայաստանը եւ հազիվ թե համաձայն լինեն, որ մի գեղեցիկ օր դիտորդի դերում հայտնվեն հայերը:

– Ուզում եմ ընդգծել, որ անկախ Արարատի գտնվելու վայրից, կողմերից յուրաքանչյուրը իրավատու կլինի լեռը համարելու իրենը: Միայն թե մեզ համար նա մի փիլ ավելի շատ է մերը, քանի որ իրենց օրն Արարատին նայելով սկսող հայերի թիվն անհամեմատ մեծ է թուրքերի թվից:

Լեռը հաշտության ու բարեկամության խորհրդանիշ դարձնելու համար ճիշտ կլիներ բաժանել երկու երկրների միջեւ: Պետական սահմանը կարելի է անցկացնել Մեծ եւ Փոքր Մասիսների գագաթագծերով: Այդ դեպքում մեր երկու երկրներից յուրաքանչյուրին կպատկաներ լեռան տեսանելի մասը: Միաժամանակ երկու պետությունները կզրկվեին «բանալու անցքից» միմյանց դիտելու հնարավորությունից:

– Իսկ Հայոց ցեղասպանության հետեւանքով պատճառված նյութական վնասների փոխհատուցո՞ւմը:

– Կարծում եմ, Հայաստանի պետությունն առհասարակ կարող է հրաժարվել փոխհատուցումից, եթե Թուրքիան վերջ դնի Ցեղասպանության ժխտմանը եւ Հայաստանին, օրինակ, 99 տարով անհատույց վարձակալման տա սեւծովյան Տրապիզոն նավահանգիստը՝ իր տարածքով մինչեւ Հայաստան ընկած հողատարածքով: Դա տնտեսապես ձեռնտու կլիներ նաեւ Թուրքիային, կաշխուժացներ նրա արեւելյան նահանգների կյանքը: Ի դեպ, դեպի ծով ելք չունեցող երկրների համար նման լուծումներ նախատեսված են ծովային իրավունքին վերաբերող 1982 թ. հայտնի պայմանագրի դրույթներով:

Երրորդ հազարամյակի շեմին մեզ համար եւ առավել եւս թուրքերի համար գլխավոր խնդիրն է ձերբազատվել անցյալի բեռից, վեր կանգնել մեզ ներշնչված առասպելներից, որոնք դարձել են մեր երկրորդ «ես»-ը:

Վստահ եմ, որ Թուրքիայի ներկայիս ղեկավարները հասկանում եմ, որ Հայոց ցեղասպանության ճանաչումն անխուսափելի է: Դա լոկ ժամանակի հարց է: Իսկ ժամանակն անհնար է կանգնեցնել:

ԱԶԳ

Միջազգային

ՈՒՇԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հեյդար Ալիեւ. «Մենք ասում ենք Լեռնային Ղարաբաղը պետք է Ադրբեջանի կազմում ունենա ամենալայն ինքնավարություն»

«Ադրումենտի ի ֆակտի» հեղինակավոր շաբաթաթերթը, որն, ի դեմ, ռուսասանյան պարբերականներից ունի ամենամեծ տիրաժակը՝ 2 մլն 880 հազար օրինակ, իր վերջին համարներից մեկում ամբողջական էջ է նվիրել Ադրբեջանին ու երկրի նախագահ Հեյդար Ալիեւին:

Նախագահ Ալիեւն անդրադարձել է հիմնական երկու խնդիրներ՝ «բռնազավթված տարածքներ ու ադրբեջանցի փախստականներ» եւ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ»:

«Փախստականներ» ենթավերնագրի ներքո հոդվածի հեղինակը գրում է. «Ադրբեջանի համար արյունալի վերք է Ղարաբաղի խնդիրը: Փախստականների կարելի է հանդիպել յուրաքանչյուր քայլափոխի: Երկրի 8 մլն բնակիչներից 1 մլն-ը մնացել է անօթեւան: Բաքվի ծայրամասում կանգնած է մի ահռելի անավարտ շինություն, որն ամբողջովին զբաղեցնում են փախստականները, տասնյակ հազարավորները հրաշք ակնկալիքով բնակվում են մերձմայրաքաղաքային ճամբարներում»: Ապա հետեւում է Ալիեւի բացատրությունը. «Երբեմն այցելում եմ «վրանների քաղաք» ու ամեն անգամ վերադառնում եմ հիվանդ: Իմ ընկեր Ռոստրոպովիչը ցանկացավ տեսնել նրանց ու վերադառնալով՝ լաց եղավ: Այս վրաններում երեխաներ են ծնվում, մարդիկ մահանում, երիտասարդներ ամուսնանում»:

Լրագրողը հարցնում է. «Մի՞թե հնարավոր չէր ուք տարում գոնե այս ցուցադրական անավարտ շինությունը վերջացնել, ուր իշխանությունները զանազան արտասահմանյան պատվիրակությունների տանում-ցուցադրում են: Մի՞թե չի կարելի վրաններում ապրողների համար շենքեր կառուցել, չէ՞ որ այս մարդիկ գործազուրկ են եւ իրենք կարող են կառուցել»: Պատասխան. «Մենք ջանում ենք նրանց վերադարձնել մշտական բնակավայրեր: Նրանցից յուրաքանչյուրն ասում է՝ մենք պետք է վերադառնանք մեր հողերը: Մարդիկ ուզում են վերադառնալ այնտեղ, որտեղ իրենց նախնիներն են թաղված»:

Անդրադառնալով ԼՂ հակամարտությանը, Ալիեւը «Ղարաբաղի կարգավիճակը» ենթավերնագրի տակ շարադրում է. «Երբ վերադարձա իշխանության, փորձում էի դադարեցնել պատերազմը, չնայած Ադրբեջանի տարածքի մի հատված բռնազավթված էր, մեկ միլիոն փախստական ունեինք, մի մասը սպանվել էր... Այժմ Հայաստանի հետ ԼՂՀ կարգավիճակի շուրջ բանակցում ենք: Մենք ասում ենք՝ ԼՂՀ-ն պետք է Ադրբեջանի կազմում ունենա ամենաբարձր ինքնավարություն: Հայկական կողմն անկախություն է պահանջում: Ղարաբաղը փոքրիկ հողակտոր է, որտեղ այժմ բնակվում է շուրջ 60 հազար մարդ, իսկ նախկինում 170 հազար էր, 30 տոկոս՝ ադրբեջանցիներ, 70 տոկոս՝ հայեր: Ադրբեջանցիներին տեղահան արեցին, հեռացավ նաեւ հայերի մի մասը: Այսօր Ղարաբաղում հայերն ապրում են անտանելի պայմաններում, բայց ցանկանում են անկախ լինել: Մենք թույլ չենք տա: Եթե համաձայնենք հայերի պահանջներին, այլեւս բանակցությունների կարիք չի լինի, այդ դեպքում հարցը վերջնական լուծում կստանա: Այսօր Ռուսաստանը Չեչնիայի դեմ է պատերազմում: Ինչո՞ւ: Որպեսզի պաշտպանի երկրի տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանն էլ է պաշտպանում՝ տարածքային ամբողջականության սկզբունքը»:

Բաքվի մոտ փախստականների վրանաքաղաքը:

Հոդվածում Ադրբեջանի նախագահը նոր բան չի ասում, բացի տարիներ շարունակ իր իսկ կողմից բազմաթիվ անգամ կրկնածը՝ հայերը զավթել են Ադրբեջանի տարածքի մեկ հինգերորդը, մեկ մլն ադրբեջանցիներ դարձել են փախստականներ: Նորություն չէ, երբ Ադրբեջանի քարոզչական մեքենան համաշխարհային հանրությանը փորձում է մատնացույց անել եւ ոչ առանց հաջողությունների, թե իբր Հայաստանն ագրեսոր է:

Հիշեցնենք՝ ԽՍՀՄ փլուզմանը հետեւեց նրա կազմում գտնվող 15 հանրապետությունների անկախությունը: Ադրբեջանը ժառանգեց 86,6 հազար քառ. կմ տարածք՝ ներառյալ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը (5,5 հազար քառ. կմ) եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (4,4 հազար քառ. կմ): Եթե նույնիսկ Հայաստանում գտնվի «նորությունասեր» մեկ այլ մոլորյալ եւ ԼՂՀ-ն համարի Ադրբեջանի անբաժանելի մաս, եթե նույնիսկ հայ ազատամարտիկի արյամբ ազատագրված Քելբաջարի, Լաչինի, Ղուբաթլուի, Ջեբրայիլի, Զանգելանի, Աղդամի եւ Ֆիզուլու շրջանները հայտարարի «բռնազավթած», ապա, միեւնույն է, «Հայաստանը չի զավթել Ադրբեջանի տարածքի մեկ հինգերորդը»: Դիմենք տարրական թվաբանության. հայերի կողմից «բռնազավթված» յոթ շրջանների ընդհանուր մակերեսը շուրջ 8 հազար քառ. կմ է, սրան ավելացրած ԼՂ-ի 4,4 հազարը, ստացվում է շուրջ 12,4 հազար, որը կազմում է Ադրբեջան պետության՝ ԽՍՀՄ-ից ժառանգած տարածքի շուրջ 13 տոկոսը:

Փախստականների մասին. ոչ թե մեկ մլն, ինչպես նախագահ Ալիեւն է ասում, եւ աշխարհը՝ ընդունում, այլ շուրջ 500 հազար, գրեթե այնքան, որքան հայեր լքեցին Ադրբեջանի մայրաքաղաքն ու տարբեր շրջաններ, որի մասին միջազգային հանրությունը, ոչ իր մեղքով, պատկերացում անգամ չունի: Էլ չենք խոսում Մարտակերտի եւ Մարտունու շրջանների կորուսյալ տարածքների, Արծվաշենի, Շահումյանի շրջանների մասին:

Միջազգային ասպարեզում Հայաստանի պետական քարոզչության բացակայության պայմաններում Ադրբեջանն արդեն կարողացել է համաշխարհային հանրությանը համոզել, թե հայերն ագրեսորներ են, բռնազավթել են ԼՂ-ն եւ ոչ միայն:

ԹԱԹՈՒԼ ՎԱՀՈԲՅԱՆ

Բաքվում ընթանում է ՆԱՏՕ-ի կազմակերպած տարաշրջանային խորհրդաժողովը

ԲԱԲՈՒ, 3 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Ապրիլի 3-ին Բաքվում սկսվել է ՆԱՏՕ-ի կազմակերպած խորհրդաժողովը, որը նվիրված է արտակարգ իրավիճակների կանխմանը նպատակաուղղված գործողությունների ծրագրման բնագավառի, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացման ժամանակ քաղաքացիական եւ ռազմական կառույցների փոխգործողության ոլորտի սաժավորմանը: Ինչպես հաղորդել են Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամլո ծառայությունում, պարապմունքների դասընթացը նախատեսված է Ադրբեջանի եւ նրա հարեւան պետությունների, այդ թվում՝ Թուրքիայի արտակարգ իրավիճակների կանխման մասնագետների համար: Խորհրդաժողովի աշխատանքը կտեւի մինչեւ ապրիլի 7-ը: Սաժավորումը կազմակերպված է ՆԱՏՕ-ի քաղաքացիական արտակարգ պլանավորման տնօրենության, Եվրոպայում ՆԱՏՕ-ի միավորված զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի վարչության քաղաքացիական կառույցների հետ համագործակցության բաժնի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից համատեղ:

Լեյլա Զանա. «Գրառումներ բանտից»

ԱՄՆ-ում լույս է տեսել Թուրքիայի խորհրդարանի անդամ Քրդուհու գիրքը

Ուոթերթաունի (Մասաչուսետս) Բլու Կրեյն Բուքս հրատարակչությունը «Մարդու իրավունքներ եւ ժողովրդավարություն» մատենաշարով վերջերս լույս է ընծայել Թուրքիայի խորհրդարանի անդամ առաջին քրդուհու «Գրառումներ բանտից» հատորը, որը պարունակում է նրա նամակներն ու հոդվածները՝ գրված Անկարայի բանտից 1994-ին նրա ձերբակալումից ի վեր, հաղորդում է «Արմինյն միրոր սփեթթեյթր» շաբաթաթերթը:

Լեյլա Զանան քրդական ինքնության հաստատման ու օտարների կողմից ճանաչման ժրաջան պայքարող լինելուց բացի, նաեւ պայքարում էր Թուրքիայում կանանց ազատագրման եւ ժողովրդավարության հաստատման հարցերով, երբ 1991-ին ընտրվեց խորհրդարանի անդամ: Սակայն նրա հանդեպ հանդուրժողականությունը երկար չտեւեց, եւ 1994-ին մի քանի այլ քուրդ պատգամավորների հետ նա զրկվեց անձեռնմխելիության իրավունքից եւ 15 տարվա բանտարկության դատապարտվեց քրդական խնդրին խաղաղ լուծում առաջարկելու համար:

«Այսօր ժողովրդավարության եւ ներկա սահմանների առկայության պայմաններում կարելի է քաղաքական խաղաղ լուծում գտնել քրդական խնդրին», գրել է նա 1995-ին՝ «Մտքի ազատություն» սախարովյան մրցանակի արժանանալու առիթով: «Լեզվի, կրոնի եւ մշակույթի պարտադրված արժեքներից բացի, մենք դավանում ենք նաեւ մարդու իրավունքների եւ ազատության համընդհանուր արժեքներ, որոնց անունից էլ խնդրում եմ ձեզ վերջ դնել իմ ժողովրդի ողբերգությանը եւ կառուցել իսկական ժողովրդավարական, բազմակարծիք եւ եվրոպականացված Թուրքիա», հորդորել է նա:

Իր նամակներում եւ հոդվածներում Զանան խոսում է կյանքի, ժողովրդի, կանանց եւ համոզմունքների մասին: Նա ծնվել է 1961-ին Արեւելյան Թուրքիայի Բալը փոքրիկ գյուղում: Ամուսնացած է քուրդ հասարակական գործիչ Մեհդի Զանայի հետ, որը 1977-ին ընտրվել է Դիարբեքիրի քաղաքապետ: 1980-ի զինվորական հեղաշրջումը քրդերի դեմ նոր ճնշումների ալիք բարձրացրեց, եւ Մեհդին հազարավոր ուրիշների թվում ձերբակալվեց եւ բանտարկվեց «հանուն ազգային անվտանգության»: Հետեւելով բանտից բանտ իր ամուսնու տեղափոխումներին, Լեյլան ավելի խորն է սկսում թափանցել կանանց իրավունքների պաշտպանության հարցերի մեջ եւ սանձնում ղեկավարի դերը: Նրա զարգացումն այդ հարցերում քրդական ազատագրական պայքարի զարգացման հոմանիշ է դառնում եւ 1991-ին ձայների 84 տոկոսով ընտրվում է պատգամավոր: «Այս գիրքն ականավոր մի կնոջ մասին է, որին ներկայացնելու կարիքը չկա: Այս էջերում արտացոլված կյանքը հատորներ կարող է լցնել: Լեյլան իրավամբ արժանի է կոչվելու քուրդ ժողովրդի դուստրը», գրել է առաջաբանում Անդրեյ Սախարովի այրին՝ Ելենա Բոնները: Երկրորդ առաջաբանը գրել է Հյուսիսային Իռլանդիայի խաղաղության ակտիվիստ եւ խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Բեթի Ուիլյամսը:

Լեյլա Զանան, որն, ըստ լրատվության, տառապում է լարդի հիվանդությամբ եւ ոսկրափուտով, շարունակում է բանտարկված մնալ՝ հակառակ համաշխարհային հասարակայնության անդուլ ջանքերի եւ բողոքների: Նրա ամուսինն ու դուստրը աքսորված են եւ գտնվում են Եվրոպայում:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Հայ երիտասարդ հանրապետականը

19-ամյա Վարդան Ջիհանյանը առաջադրվում է հանրապետականների կենտրոնական կոմիտեին անդամակցելու համար՝ Կալիֆոռնիայի 43-րդ ընտրատարածքից: Ընտրվելու դեպքում նա կլինի կոմիտեի ամենաերիտասարդ անդամը:

Վարդանը քաղաքականությամբ սկսել է զբաղվել 13 տարեկանից: Հետագայում, հանդիպելով Ջիմ Ռոգանին, նա սկսեց աշխատել Ռոգանի նախընտրական շտաբում, ինչը շարունակվում է մինչեւ օրս: Երիտասարդ

քաղաքական գործչի շնորհիվ տեղական քաղաքական կյանքում հնչեց եւս մի վճռական հայկական ձայն, իսկ հանրապետականների օգտին քվեատուփերին մոտեցող ընտրողներին ավելացան մի մեծ խումբ երիտասարդ ընտրողներ: «Տարիքս շնորհիվ ընտրողների երիտասարդ, բարձր սերունդ եմ գրավում: Իմ օգտին ստորագրություն տված ընտրողների մեծ մասը երիտասարդներ են՝ առավելագույնը՝ 19 տարեկան», ասում է Վարդանը, որը քաղաքական գիտություններ եւ հասարակության հետ կապերի սկզբունքներ է ուսանում, սակայն պատրաստվում է նվիրվել իրավաբանությանը: «10 տարի հետո, հավանաբար, որեւէ տեղ իրավաբանությամբ կզբաղվեմ»: Իսկ քաղաքականությունը իմ արյան մեջ է: Առանց դրա չեմ կարող: Միշտ էլ այս կամ այն կերպ զբաղվելու եմ քաղաքականությամբ»:

ԱԻՄ փետրվար

Է. Բալադյուրը նախընտրում է թուրքական ծագումը

Նշելով հանդերձ, որ բոլորովին չարժե խոսել մի անձի մասին, որ չափազանց խղճալի, նույնիսկ հիվանդագին բարդույթից է տառապում, Փարիզի «Յառաջ» օրաթերթն, այնուամենայնիվ, ճիշտ է վարվում հիշատակելու նախկին վարչապետ Էդուարդ Բալադյուրին առնչվող վերջին դեպքը: Թերթի մարտի 21-ի համարից տեղեկանում ենք, որ Բալադյուրը Ռոժե Հանեի եւ Էմանուել Բեարի հետ հյուրընկալվել է Ֆրանսիական հեռուստատեսության երկրորդ կայանի մարտի 18-ի հեռարձակած «Ամբողջ աշխարհն է խոսում» ծրագրի կողմից:

Հարցազրույցի ընթացքում հաղորդման հեղինակը՝ Թիերի Արդիսոնը հանկարծ ասել է, որ մի նյութ կա, որն իրեն խորհուրդ են տվել չարձարծել, բայց եւ այնպես ինքն ուզում է խոսել Բալադյուրի թուրքական ծագման մասին: «Ձեր օսմանյան ծագման..., թեեւ երկար ժամանակ է, ինչ ֆրանսիացի եք», ասել է նա, որին Բալադյուրը պատասխանել է. «Ճիշտ է, որ վաղուց ֆրանսիացի եմ»՝ չհերքելով, նույնիսկ փորձ անգամ չանելով հերքելու իր թուրքական ծագումը: Նրան առավել եւս դժգոհություն է պատճառել Արդիսոնի «խորքում փաստորեն զաղթական աշխատավոր եք» նախադասությունը, որով նա եզրափակել է նյութը: Մյուս հրավիրվածներից Ռ. Հանեն քանիցս պարծանքով հիշատակել է իր հրեական ծագումը: «Եթե (Բալադյուրը) կը խորհի, որ այդ ձեւով աւելի յարգանքի կ'արժանանայ, բաւական կը սխալի...», վերջում գրում է «Յառաջը»:

Հ. Ե.

ԱԶԳ

Մշակույթ

«- Բարեկամներ, ես շնորհակալ եմ ուշադրության, հավերի համար: Ես բացարձակապես չեմ հուզվում. դահլիճում շատ մորուավորներ կան, ամեն ինչ հասկանալի կլինի...

Հենց ինչ-որ նոր բան է հայտնվում, անմիջապես փորձում ենք դասակարգել. ո՞ւր է տանում, ի՞նչ ուղղությամբ: Մակդիրներ ենք կցնում: Եթե «Սայաթ-Նովան» պոետիկ կինո է, ինձ անմիջապես դասում են ռեժիսուրայի բարձրագույն պրոֆեսիոնալների շարքում: Երկու օր առաջ ես նամակ ստացա Ֆելլինիից, որից չեմ կարող հասվածներ մեջբերել. անհարմար է:

Ո՞ր կարգում դասել «Պատերազմ եւ խաղաղությունը», «Տանկա Կարենինան» (ես այսպես եմ անվանում այս ֆիլմը), «Ոճիրն առանց պատժի» կամ «Ազնվականական բույնը»: Կինոարվեստի որակի վերջնական արժեքորկում է սա, բացարձակ ողբերգություն ողջ աշխարհում եւ, մասնավորապես, խորհրդային կինոմատոգրաֆում: Ես գտնում եմ, որ յուրօրինակ ճգնաժամ է, չկան վառ ստեղծագործողներ: Մեծ տառապյալ Տարկովսկին չի կարողանում ամեն տարի աղբեցնել իր տաղանդով, իր խորհրդավորությամբ: Իսկ մնացածն ինձ համար ոչինչ է... Ըստ իս, այս ամենը կապարվում է, որովհետեւ ստեղծագործողների, առավել հետաքրքիր ստեղծագործողների նկատմամբ անվստահություն է ծեւավորվում: Անվստահությունը յուրօրինակ, հետաքրքիր վիրավորանք է, անվստահությամբ են պայմանավորված ստեղծագործողի ողջ ճակատագիրը եւ անհերեւակայելի կարճ կյանքը: Դրա պատճառով էլ հենց խորհրդային Միությունում դասական ծեւով տաղալվեց երեւելի տաղանդներից մեկը՝ լենինյան հոբելյանը: Լենինյան թեմաներով ֆիլմեր ստեղծեցին ամենաանշնորհք մարդիկ: Էկրանին պարզապես վատ ստեղծագործություններ են, կինոխտան ժաղավենների կիլոմետրեր, մարդիկ երկրորդ անգամ չեն գա կինոդահլիճ ոչ որպես հանդիսատես, ոչ որպես արվեստաբան, ոչ որպես կինոգետ:

Իմ նկարի ծնունդն անհերեւակայելի բարդ եղավ: Ես կարծես այս անգամ կարողացա խաբել իմ հայրենակիցներին՝ հայերին, որ մեծահոգաբար ցանկանում էին, որ ես ստեղծեի «Մոռացված նախնիների ստվերների» Կարսի տարբերակը: Նրանք կարծում էին, որ կգնամ եւ իրենց համար անմիջապես մեդալներ կբերեմ: Դա տեղի չունեցավ:

Հայաստանը մեծ երկիր է, աղբեցուցիչ մշակույթով եւ իմ հայրենիքն է: Ես առաջին անգամ եղա իմ երկրում: Շունչս բռնացիորեն կտրվեց իմ ժողովրդի պոեզիան եւ գեղեցկությունը տեսնելով (ես վրացական կոփվածքի, թիֆլիսցի հայ եմ): Առաջին անգամ տեսա Հայաստանը (**Ս. Փարաջանովը Հայաստան եկավ 1968-ին եւ սկսեց նկարահանել «Սայաթ-Նովա» ֆիլմը) («Նռան գույնը»)- Ս. Գ.**: Դա խենթացնող անտիկ մշակույթ է, մարդություն, մեծություն: Խնդրում եմ ջազով չդադարել, որ այս օրերին ներկայացվում է **(Մինսկում ելույթ էր ունենում Կ. Օրբելյանի ղեկավարած նվագախումբը- Ս. Գ.)**:

Հայաստանի կառավարությունը չհասկացավ նկարը, եւ երեք տարի անց մեծահոգաբար առաջարկեց անել «Սասունցի Դավիթ» ֆիլմը (**այս ֆիլմի ճակատագրին խառնվեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՄԱԿ-ը, արվեստի խոշորագույն վարպետները**): Ֆիլմը (խոսքը «Սայաթ-Նովայի» մասին է- Ս. Գ.) էկրան է բարձրանում իմ բարեկամ Սերգեյ Իոսիֆովիչ Յուտկեւիչի խմբագրությամբ (Փարաջանովի տարբերակով արված «Սայաթ-Նովան» չընդունվեց: **Այսպիսի պահանջ դրվեց. կամ այն ընդհանրապես էկրան չի բարձրանա, կամ պետք է փոփոխել: Նկարը փրկելու համար Փարաջանովը Յուտկեւիչին է խնդրում կատարել մոնտաժը: Վերջինս կատարում է Փարաջանովի խնդրանքը, եւ ֆիլմը էկրան է բարձրանում «Նռան գույնը» անվանումով- Ս. Գ.)**: Նա չի հասկացել ինձ եւ նույնիսկ մի անգամ հարցրեց. «Ինչո՞ւ եք այդպես շտապել, որ երկու դուբլ հայտնվել են իրար կողքի»: Նա չի հասկացել, որ դա մեթոդ է, ոճ: Նա ինձ ասում է. «Տարօրինակ է Ձեր կաթողիկոսի մահը: Կաթողիկոսը մահացել է, իսկ նրա աչքերը բաց են, եւ նա շնչում է»: Նա բառացիորեն է ընդունում մահը. նշանակում է պետք է փակել աչքերը եւ ծնոտը կապել: Այդ պատճառով էլ նա վերափոխեց նկարը. ինչ-որ մի որակով այն ցուցադրվեց մոսկովյան կինոթատրոններում (թեեւ շատ միչ), եւ ես տեսա այն կողմերը, որոնցով պահպանում եմ գոյությունս: Սակայն կրկին վստակեցի ինչ-որ մեկի անվստահությունը՝ չաշխատել, ֆիլմեր չանել...

Վերջերս ինձ մոտ ներխուժեց խենթացած Բոնդարչուկը, երբ նրան հեռագրեցի, որ ավելի շատ հավանում եմ նրա «Վաթերլոոն», ավելի, քան բացարձակապես տաղալված «Պատերազմ եւ խաղաղությունը», որն արդեն պետական ողբերգություն է դառնում: Հսկայական գումարներ են ծախսվել, բայց ոչ մի արդյունք չկա: Ես խորհրդային Միությունում չգիտեմ որեւէ մեկին, որ գեթ երկրորդ անգամ գնա նայելու այդ ֆիլմը, թեկուզ՝ մեկ սերիան, թեկուզ՝ սխալմամբ: Այդպիսի բան չի եղել, չկա: Հասկանո՞ւմ եք, երրորդ եւ չորրորդ սերիաները ոչ ոք չի նայել: Իսկ «Վաթերլոոն» հետաքրքիր նկար է: Եվ ահա, նա՝ Բոնդարչուկը, գալիս է ու ասում, որ ռուսական պատվիրակությունը անստատսելիորեն շնորհավորանքներ է ընդունել Սան-Ֆրանցիսկոյի քաղաքապետից եւ քաղաքապետարանից «Սայաթ-Նովա» յուրօրինակ ֆիլմի առիթով: Հանձնաժողովը է թռել Մոսկվա, որպեսզի իմանա, թե մոսկովյան ֆիլմերի շարքում ինչպես է հայտնել «Սայաթ-Նովան»: Թե ինչպես է հայտնվել, ինձ հայտնի չէ, բայց այն սկսում է հետաքրքրել հասարակությանը:

Եկել է ժամանակը, որ մե՛նք ներողություն խնդրենք

Սերգեյ Փարաջանովի ելույթը Մինսկում, 1971 թվականին

Նրա տուն շատ մարդ էր մտնում. շատ մարդ էր նրան լսում կինոյի, բանաստեղծության, նկարչության ոլորտի մարդիկ: Բարեբախտաբար նաեւ կա-գեբեիստներ, բարեբախտաբար, որովհետեւ նաեւ նրանց շնորհիվ են շատ բաներ փրկվել: Եթե նրանք չլինեին, այժմ դժվար թե պահպանվեր 1971 թ. դեկտեմբերի 1-ին Մինսկում արտասանած Փարաջանովի ելույթի տեքստը, երբ «Մեծն խռովարարը» ելույթ էր ունենում Բելառուսիայի ստեղծագործող եւ գիտական երիտասարդության հավաքի ժամանակ: Ինչ-որ մի Բորկով (ՊԱԿ-ի Բելառուսիայի վարչության պետ) 23 էջի վրա վերծանված այս ելույթի տեքստը պետք է անմիջապես Մոսկվա հասցներ, եւ ինչ-որ մի Անդրոպով (ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ) այս տեքստի վրա պետք է պիղատսյան ծակագրություն աներ. «...Կիեւի Դովժենկոյի անվան կինոստուդիայի ռեժիսոր Ս. Փարաջանովի ելույթը. բացահայտ դեմագոգ բնույթ ունենալով, ներկաներից շատերի մոտ վրդովմունք է առաջացրել: Բելառուսիայի կոմկուսի ԿԿ-ին տեղեկություն է տրված այս մասին...»: (Այս ժամանակներն ապրած մարդիկ շատ լավ են հասկանում, թե ինչ կարող են ասել այսպիսի մակագրությունները): Մի հատված մեջբերենք Սերգեյ Փարաջանովի հիշատակված ելույթից, որի տեքստը մեծահոգաբար տրամադրել են Փարաջանովի տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը եւ արվեստաբան Կարեն Միխայելյանը: Նշենք, որ այս հավաքի հրավերը Փարաջանովը ստացել էր, երբ հերթական «պարապուրդում» էր, այսինքն նրան թույլ չէին տալիս նկարահանել: Նա Մինսկ էր տարել իր «Սայաթ-Նովա» («Նռան գույնը») ֆիլմի հեղինակային վարկածը, որի ցուցադրումն էլ առիթ եղավ, որ նա խոսի կինոյի մի շարք ակնհայտ ցավոտ խնդիրների մասին: Հասկանալի է, որ այս հրապարակումը որեւէ հորելյանի, տարեթվի հետ կապ չունի (թեեւ 1990 թվականին, 10 տարի առաջ Ս. Փարաջանովը կնքեց իր մահկանացուն), քանզի նա բոլոր չափումներից դուրս է...

Իսկ ինձ համար դա արդեն անցած փուլ է: Այժմ ես պատրաստվում եմ աշխատել ուրիշ թեմաների վրա (**«Սայաթ-Նովայից» հետո Փարաջանովը սցենար գրեց Արա Գեղեցիկի մասին (1968 թ.), աշխատեց «Բախչիսարայի շատրվանի» թեմայով սցենարի վրա («Նիրհող ամրոցը», 1969 թ.), Մ. Կոցյուբինսկու «Ինտերմեցցոյի» թեմայով (1970 թ.): Սրանցից բացի, այլ ծրագրեր նույնպես կային- Ս. Գ.**): Սպասում եմ, որ կաղրեմ, կծերանամ եւ նույնիսկ կկուրանամ (**Փարաջանովը տառապում էր շաքարախտով- Ս. Գ.**) սպասումների ճանապարհին: Արդեն վեց տարի Ուկրաինան ինձ հնարավորություն չի տալիս նկար ստեղծել: Արդեն երեք տարի է վերադարձել եմ «Սայաթ-Նովայից» հետո: Այս նկարը դժվարությամբ է երեւում էկրաններին, ինչ-որ տեղերում: Հանդիսատեսը չի հասկանում ֆիլմը, իսկ ես չեմ ուզում նրանից ներողություն խնդրել: Ինձ թվում է՝ արդեն եկել է ժամանակը, որ հանդիսատեսը ներողություն խնդրի ստեղծագործողից, որովհետեւ ինչ-որ ուրիշ բաներ են գովաբանում, ինչ-որ ուրիշ սպասելիքներ կան...»:

Փարաջանովի ելույթի ամբողջական տեքստը շատ ավելի ծավալուն է, եւ թերթի ծավալը հնարավորություն չի ընձեռում այն լրիվ ներկայացնել: Սակայն, կարծում եմ, մեջբերած հատվածը որոշակի պատկերացում է տալիս կարծիք կազմելու ելույթի ուղղվածության մասին: Բնականաբար, այսպիսի ելույթները չէին կարող ներվել հատկապես 70-ականների խորհրդային Միությունում կոչվող տարածքում: Ու չներվեց նաեւ Փարաջանովը... Սակայն այս անգամ խնդիր չունենք ներկայացնել Սերգեյ Փարաջանովի՝ «մեծն խռովարարի» կենսագրության ճշնությունը, առավել եւս, որ դա արել եւ անում են ուրիշներն ավելի մասնագիտորեն: Պարզապես ցանկալի է, որ մեր ընթերցողը եւս ծանոթ լինի այս ելույթին, որն այնքան լուրջ հետեւանքներ ունեցավ տաղանդավոր ռեժիսորի համար:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Հայելու դիմաց

Վանո Սիրադեղյանի նոր գիրքը

«Տղան գիտեր, որ դժվարը կովին նախորդող ոտքերն են: Սասկացող թշնամանի մթնոլորտին նրա սիրտը չէր ընտելանում: Թշնամանի թույնը կաթում էր անմեն ստի նուրբ թաղանթին, եւ ստիպողը դղրդում էր ականջներում: Բայց դա անցնում էր առաջին, երկրորդ հարվածից հետո. սանանալուց կամ հասցնելուց:

Նա քաջ գիտեր առաջին զարկի առավելությունը, բայց չէր կարող առանց ուղեղի մթագնումի մարդու աչքերին նայել ու խփել եւ, որպես կանոն, առաջինը խփում էին իրեն: Դա այնքան էլ սարսափելի չէր: Վատը կռվից մնացող բենն էր: Այդ ոխակալ անվստահության տեսողությանը նրա սիրտը չէր դիմանում: Ելքն այն էր, որ հակակշիռ թշնամանքով մտասեւեռվեր, թշնամանքի օդով սնվելով՝ իր կորովը տեղը պահեր...»:

Սա Վանո Վիրադեղյանի գիրն է, մի հատված նրա «Սիրելու տարիք» պատմվածքից: Ճի՞շտ գիր է, սխալ, պի՞նդ, թե՞ ճկվող՝ ցույց կտա ժամանակը: Չշտապենք: Փաստն այն է, որ մեր գրականության մեջ կա, կայացել է Վանո Սիրադեղյան գրողը, եւ այս փաստը հերքել չի կարելի: Ու հենց այս պատճառով էլ գուցե առաջնորդվել է «Նաիրի» հրատարակչությունը՝ լույս ընծայելով գրողի հատընտիրը: «Չեռֆդ ես տար ցավի վրայից», այսպես է կոչվում գիրքը: Այս վերնագիրն ունի նաեւ գրքում զետեղված ակնարկ-էսսեն, այն գործը, որից հաճախ, շատ հաճախ մեջբերումներ են կատարվում, հատկապես այն հատվածը, որում ասվում է. «Հայաստանը մանրամասն սիրելու երկիր է...»: Լավ միտք է, անշուշտ, գրողական նորովի դրսեւորում: Բայց այնքան է կատարվել այս մեջբերումը, որ Վանո Սիրադեղյանի գրականությանն անծանոթ մարդը այս մի (թեկուզ՝ ընտիր) խոսքով է ճանաչում գրողին: Իսկ նույն Վանո Սիրադեղյանը շատ բան է գրել, շատ բան է ասել:

Այս անգամ գրքի առաջաբանում, շատիկին գրողի ուրիշ խոսքն է տեղավորված. «Հայը պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից: Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի: Եվ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ ադրելը պարտադիր չէ: Եվ հայրուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կաղվում հավատական, չպարտավորեցնող, սրտագին սիրով...»: Այս խոսքի տերը նույնպես Վանո Սիրադեղյանն է: Ու Ասված չանի, որ հիմա էլ առիթով, թե անառիթ մեջբերենք միայն այս խոսքը: Իր իսկ խոսքը վերափոխելով ասենք, որ Վանո Սիրադեղյանը մանրամասն ուսումնասիրելու գրող է: Նրան հետաքրքրությամբ կարելի է ջարդել (ինչպես ամեն մի գրողի, ամեն մի արվեստագետի): Կարելի է ջարդել նաեւ անհարկի փառաբանության խոսքեր հեղեղելով: Պարզապես պետք է ուշադիր կարդալ նրա ստեղծած գրականությունը, փորձել ճշմարիտ եզրակացությունների գալ: Դա առավել դժվար գուցե լինի այժմ, երբ հասարակության ուշադրության կիզակետում Վանո Սիրադեղյան մարդն է, նա, որին հաճախակի շփոթում ենք հայելու հետ:

Շփոթելով գրականությունը իրականության հետ, դրանք միմյանցով բացատրելու անհիմաս ջանքեր չգործադրելով, ասենք, որ արժե կարդալ այս գիրքը՝ «Չեռֆդ ես տար ցավի վրայից»: Եթե ինքներս այնքան ուժեղ լինենք, որ իմաստունի խոնարհությամբ գնահատենք այս գիրքը, ապա ինքը շատ փիչ կշահի, մենք հարյուրապատիկ, հազարապատիկ կշահենք:

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՉԵՌՔԴ ԵՍ ՏԱՐ ՑԱՎԻ ՎՐԱՅԻՑ

ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Պետք է տեսնել նաեւ կատարվածը

Վերջին ժամանակներս հաճախակի են դարձել հարձակումները ՀՀ երիտասարդության հարցերի, սպորտի եւ մշակույթի նախարարության հասցեին: Ով ասես գրում է, ով ասես դժգոհ է: Չգիտեմ, գուցե այդ հարձակումներն իրենց արմատներն ունեն: Բայց ես, բնավ պատշաճի դեր չսանձնելով, ուզում եմ խոսել իմ տպավորությունների մասին:

Տարիներ շարունակ, երգչուհու իմ կարգավիճակով, շփվել եմ մշակույթի նախարարության ներկա եւ նախկին աշխատակիցների, ղեկավարների հետ: Եվ միշտ իմ նկատմամբ ցուցաբերվել է բարի ու ջերմ վերաբերմունք: Ներկայիս ղեկավարությունը եւս անչափ շատ ու լավ գործեր է անում: Թեկուզ մեկ օրինակով ուզում եմ փաստել ասածս.

Կրասնոդարից երեւան էր եկել ֆոտոթղթակից Սլավա Ավանեսյանը, որն անցել էր արցախյան ազատամարտի բոլոր ճանապարհներով, ստեղծել այս կարեւոր պատմական իրադարձության գրեթե լիակատար տարեգրությունը: Սլավան ցանկանում էր այստեղ՝ Հայաստանում, ցուցահանդես կազմակերպել: Սակայն ոչ մի հովանավոր չէր գտնում, կազմակերպությունները նույնպես չէին օգնում: Փառք Աստծո, ՀՀ մշակույթի նախարարության ջանքերով կազմակերպվեց ցուցահանդեսը, որն անցավ մեծ հաջողությամբ:

Վերջերս զանգահարեցին Գյումրիից: Ջիվան Խաչատրյանի ղեկավարած ժողովրդական գործիքների համույթի անդամները ցանկանում են երեւանում համերգ կազմակերպել: Կրկին միջամտել է երիտասարդության հարցերի եւ մշակույթի նախարարությունը: Հասկանալի է, որ կրկին հարցը լուծվեց դրականորեն:

Կարծում եմ, որ այսպիսի (եւ դեռ ավելի կարեւոր) փաստեր կարելի է շատ նշել: Պարզապես պետք է տեսնել կատարվածը, բարին, լավը...

ԳԱՅԱՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ
երգչուհի

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Ապրիլի 4

- 1806 թ. մահացել է իտալացի դրամատուրգ Կառլո Գոցին:
- 1928 թ. ծնվել է ռուս դերասանուհի Էլինա Բիստրիցկայան:
- 1932 թ. ծնվել է ռուս կինոռեժիսոր Անդրեյ Տարկովսկին, որին անվանում էին «Աստծո կողմից ուղարկված ռեժիսոր»: Անվանի ռեժիսորի ժողովրդականություն են վայելում:
- 1945 թ. մահացել է բանաստեղծ Վահան Թեքեյանը: 1905 թ. Թեքեյանը ճամփորդեց ողջ Եվրոպայով եւ հիմնավորվեց նախ Պոլսում, ապա Եգիպտոսում, որտեղ էլ ապրեց մինչեւ կյանքի վերջը: Թեքեյանն ամենից առաջ նուրբ քնարերգու է, իսկ բանաստեղծությունները տոգորված են սիմվոլիզմով, հայրենի երկրի, պատմության ու լեզվի սիրով:
- 1820 թ. ծնվել է հայոց կաթողիկոս, հասարակական-քաղաքական գործիչ Խրիմյան Հայրիկը:
- Այս օրը հին հայկական տոմարով Արեգ ամսվա Մարգար օրն է:

ՆԱՐԻՊ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ԲԻԼԻԱՐԴ

Մարզաձեւի մասնայականացման համար

Բիլիարդը, որ տարիներ առաջ մեզ մոտ արգելված ու փակի տակ էր, ազատարհում տարածված մարզաձեւ է: Այն անվանում են ինտելեկտուալների խաղ, որն ասիճանաբար լայն տարածում է ստանում մեր հանրապետությունում: Այդ մարզաձեւի զարգացմանը մեծաթես նպաստում է 1989-ին ստեղծված հանրապետական ֆեդերացիան, որի հիմնադիրն ու առաջին տարիների նախագահն էր Արմեն Տոնոյանը: Այժմ նա ֆեդերացիայի պատվավոր նախագահն է, նախագահը ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի դեկան Կարլեն Մանուկյանն է:

Բիլիարդն ունի մի քանի խաղաձ՝ «ամերիկանկա», «ռուսական բուրգ», «մոսկովյան բուրգ», «սնուկեր», «կարամբոլ» եւ այլն: Բիլիարդի Հայաստանի ֆեդերացիան ամեն տարի անցկացնում է հանրապետական առաջնություններ եւ ֆեդերացիայի գավաթի խաղարկություններ: Օրերս տեղի ունեցավ Հայաստանի ուժեղագույն մարզիկների առաջնությունը՝ «մոսկովյան բուրգ» խաղաձից: Առաջնությանը, որն անցկացվեց կիսաօլիմպիական մրցակարգով (2 անգամ պարտվողը դուրս է գալիս մրցումներից) մասնակցեցին 16 բիլիարդիստներ՝ Երեւանից, Գյումրիից, Աբովյանից, Մասիսի ենթամարզի Ռանչպար գյուղից:

Մրցակցությունը համառ ու անզիջում էր: Կիսաեզրափակիչում միմյանց հետ ուժերը չափեցին երեւանցիներ, Հայաստանի բազմակի չեմպիոն Ռուբեն Փոթիկյանը, Միսակ Հախոյանը եւ գյումրեցի Գուրգեն Մալխասյանը: Որոշվելու էին եզրափակիչի երկու մասնակիցները: Այդ իրավունքը նվաճեցին Փոթիկյանն ու Հախոյանը: Վերջինս, 5-0 հաշվով հաղթելով մրցակցին, նվաճեց չեմպիոնի կոչումը:

Մրցավարից հետո խնդրեցի հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահ, մրցումների գլխավոր մրցավար Լեւոն Ստեփանյանին տեղեկություններ հաղորդել ֆեդերացիայի հետագա ծրագրերի մասին: Նա նախ տեղեկացրեց, որ մեկ տարի առաջ ֆիզիկական կուլտուրայի ուսումնական պլանից հանիրավի հանվել էր բիլիարդ առարկան եւ փակվել խաղաբազան: Սակայն ֆեդերացիայի նախագահության խնդրանքով նորանշանակ ռեկտոր պրոֆեսոր Վահրամ Առաքելյանի բարի կամեցողությամբ ուսումնական պլանում վերականգնվեց առարկան եւ նախկին տարածքը նորից հատկացվեց որպես ինստիտուտի բիլիարդի ուսումնական բազա: Այստեղ էլ անցկացվում են տեսական ու գործնական պարապմունքները, մրցումները: Անցած տարի ուսումնական բազայում տեղի են ունեցել երեք տարբեր խաղաձերի առաջնության մրցումներ եւ ֆեդերացիայի գավաթի խաղարկություն:

Ֆեդերացիայի նախագահությունն իր հերթական նիստում հաստատել է 2000-ի միջոցառումների օրացուցային պլանը եւ 16 առաջնակարգ բիլիարդիստների ցուցակը: Վերջիններս էլ, ինչպես նշվեց, անցկացրին իրենց առաջին մրցությունը: Նախատեսվում են այս տարի անցկացնել. ապրիլի վերջերին՝ «ամերիկանկա» խաղաձից բաց առաջնություն, հունիսին՝ «մոսկովյան բուրգ» խաղաձից խոշոր մրցաշար, հունիսին՝ Վանաձորում ուժեղագույն վարպետների ցուցադրական խաղեր, օգոստոսին՝ Գյումրիում «ամերիկանկա» խաղաձից մրցաշար, հոկտեմբերին՝ արտագնա մրցաշար էջմիածնում «ամերիկանկա» խաղաձից եւ նոյեմբերին՝ ֆեդերացիայի պատվավոր նախագահ Արմեն Տոնոյանին նվիրված մրցաշար «ռուսական բուրգ» խաղաձից: Օրացուցային պլանում տեղ է գտել նաեւ ֆեդերացիայի գավաթի խաղարկության անցկացումը: Ընթացիկ տարում հայ բիլիարդիստները կմասնակցեն նաեւ Ռուսաստանի Դաշնության մրցումներին:

Ֆեդերացիայի փոխնախագահը նաեւ իրազեկեց, որ Հայաստանի հավաքական թիմի պոտենցիալ թեկնածուներ ընտրելու նպատակով անցկացնելու են նաեւ վարկանիշային մրցումներ՝ հանրապետության հավաքական թիմը կազմավորելու համար, իսկ ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Կարլեն Եփրեմյանն ավելացրեց, որ մտադրություն ունեն կանանց նույնպես ներգրավել մարզաձեւում:

Խոսք եղավ նաեւ ֆեդերացիայի հոգսերի շուրջ: Պարոն Ստեփանյանն իր տրամքը հայտնեց ֆինանսական միջոցների պակասի առթիվ եւ նշեց, որ այդ պատճառով չեն կարողանում մարզիկներին ու մարզիչներին ուղարկել միջազգային մրցումների, որպեսզի նրանք փորձառություն ձեռք բերեն: Նա լուրջ հոգս համարեց նաեւ բազայի տարածքի նեղվածքն ու դրա պատճառով խաղասեղանների խիստ պակասը:

Ֆեդերացիայի ներկայացուցիչներն իրենց մտահոգությունը հայտնեցին նաեւ Երեւանում գործող բազմաֆանակ բիլիարդանոցների առթիվ, որտեղ հիմնական նպատակը փող աշխատելն է: Մինչդեռ կարելի է նրանց արտոնագիր տալու ժամանակ հաշվի առնել ֆեդերացիայի կարծիքը:

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՔԱՆՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

Լավագույն ութնյակը հայտնի է

ՀՖ գավաթի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումներն անվանեցին այն ութ ուժեղագույն թիմերին, որոնք կշարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար: Գավաթի խաղարկման այս փուլն անցավ բարձրագույն խմբի թիմերի ակնհայտ առավելությամբ: 6 խաղում նրանք առաջին խմբի թիմերի դարպասը խփեցին 29 գնդակ, սփականը բաց թողնելով ընդամենը մեկը: Այնպես որ առաջին խմբի թիմերը ինքնությունը չհանձնեցին:

1/8 եզրափակիչի ավարտական 3 հանդիպումներում ամենախոշոր հաշիվը գրանցվեց «Շվարբնոցի» եւ «Դվինի» մրցախաղում: Դաշտի տերը 7 անպատասխան գնդակ խփեցին: Հիշեցնենք, որ թիմերի առաջին խաղում գրանցվել էր 10-1 անսովոր հաշիվ:

«Շիրակը» «Դինամո-2»-ի հետ պատասխան խաղի արդեն առաջին ռոմեին հաստավ հաջողության՝ շնորհիվ Արամ Թումասյանի 11 մ խարվածի: Մինչեւ ընդմիջում Տիգրան Դավթյանն ու Արթուր Պետրոսյանը հաշիվը դարձրին 3-0, իսկ հանգստից հետո Արտյոմ Բեռնեցյանը խփեց 4-րդ գնդակը:

ԹԻՄԱ-ի եւ «Դինամոյի» մրցավեճի ելքը վճռվեց խաղավերջում: Ընդամենը մեկ ռոմեի ընթացքում Արտյոմ Ադամյանի եւ Վարդան Բիչախչյանի խփած գոլերի շնորհիվ «Դինամոն» կրկին հաղթանակ տոնեց (2-0):

Ապրիլի 5-ին կայանալիք վիճակահանությամբ կորոշվեն խոշոր եզրափակիչի առաջին խաղերում դաշտի տեր հանդիսացող թիմերը: Խաղերը նախատեսված են ապրիլի 8-9-ին եւ 18-19-ին:

Գավաթի ցանկի համաձայն խոշոր եզրափակիչում կհանդիպեն հետեւյալ զույգերը. «Շիրակ»-«Կիլիկիա», «Շվարբնոց»-«Դինամո», «Արաֆ»-«Միկա», «Արարատ»-«Դարաքաղ»

ԱՐՈՍ ՀԱՅԲՈՒՂԵՏՅԱՆ

Մրցեցին հավաքականները

ՌՈՆԱԼԴ ԱՌԱՍԵՆՈՆ

Եվրոպական երկրների հավաքականները ընկերական հանդիպումներ անցկացրեցին, որոնք ուժերի լավ փորձարկում հանդիսացան 2000 թ. Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլից եւ 2002 թ. աշխարհի առաջնության ընտրական խաղերից առաջ:

Իհարկե, մեզ առաջին հերթին հետաքրքրում էին եվրոպական հինգերորդ խմբի թիմերի մրցությունները, հանի որ այդ խմբում է ընդգրկված նաեւ Հայաստանի հավաքականը: Մեր խմբի վեց թիմերից չորսն այդ օրը խաղադաշտ մտան: Ահա նրանց արդյունքները. Շվեյցարիա-Նորվեգիա՝ 2-2, Հունգարիա-Լեհաստան՝ 0-0, Բուլղարիա-Բելգիա՝ 4-1, Ուելս-Ֆինլանդիա՝ 1-2: Այսպիսով, Հայաստանի թիմի մրցակիցներից Նորվեգիան ու Լեհաստանը ոչ-ոքի խաղացին, իսկ Բելգիան եւ Ուելսը պարտվեցին:

Բրյուսելում հանդիպեցին եվրոպա-2000-ի կազմակերպիչներ Բելգիայի եւ Հոլանդիայի հավաքականները: Դաշտի տերերը արագորեն առաջ անցան հաշվի մեջ. գոլերը խփեցին Վերհեյնը եւ Մոլենգան, սակայն հետագայում հոլանդացի կլուբվերը նախ կրճատեց հաշվի տարբերությունը, ապա հավասարեցրեց այն՝ 2-2: Ասենք, որ խաղը բավականին դիտարժան էր եւ բավականություն պատճառեց տրիբունաներում գտնվող 50 հազար հանդիսականներին ու միլիոնավոր հեռուստադիտողներին:

Մեծ հետաքրքրություն էր առաջացրել նաեւ Բարսելոնում անցկացված Իսպանիա-Իտալիա հանդիպումը: Դաշտի տերերին հաջողվեց 22 տարվա ընդմիջումից հետո հաղթել իտալացիներին՝ 2-0: Երկու գոլն էլ իսպանացիները խփեցին երկրորդ խաղակեսում, անկյունային հարվածների խաղարկումից հետո: Ալֆոնսոն եւ Աբելարդոն: Այս խաղից հետո Իտալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դինո Զոֆը ենթարկվեց իր հայրենակիցների խիստ քննադատությանը: Նրանց կարծիքով մարզիչը չափից ավելի փորձարկումներ կատարեց խաղի ընթացքում (Զոֆը 7 ֆուտբոլիստի փոխարինեց):

Նույնպիսի (2-0) հաշիվ գրանցվեց նաեւ Գլազգոյում, սակայն հյուրերի՝ Ֆրանսիայի հավաքականի օգտին: Շոտլանդիայի դարպաս Վիլտորի եւ Անրիի խփած գոլերը հաղթանակ բերեցին աշխարհի չեմպիոնին:

Շատ դիտարժան էր Պորտուգալիա-Դանիա խաղը: 3-րդ ռոմեին հյուրերի լավագույն ոմբարկու Դալ Թոմասոնը բացեց հաշիվը: Բայց առաջին խաղակեսի վերջում Ռուի Կոշտան (11 մ տուգանային հարվածով), իսկ երկրորդ խաղակեսում Լուիշ Ֆիգուն հաղթանակ բերեցին Պորտուգալիայի ընտրանուն՝ 2-1:

Սկզբունքային նշանակություն ուներ Խորվաթիա-Գերմանիա հանդիպումը: 1998 թ. աշխարհի առաջնությունում խորվաթները 3-0 հաշվով սենսացիոն հաղթանակ էին տարել գերմանացիների նկատմամբ, եւ վերջիններս ձգտում էին փոխվրեժի, թեեւ նրանց կազմում բացակայում էին մի քանի հիմնական խաղացողներ: Շագրեբի խաղադաշտը, որը առաջ անձրեւից հետո ծանիծ էր հիշեցնում, ֆուտբոլիստներին հնարավորություն չտվեց բարձրարվեստ խաղ ցույց տալ: Առաջին խաղակեսում հաշիվը բացեց գերմանացի Ոայները, բայց երկրորդում կովաչը այն հավասարեցրեց՝ 1-1:

Իր հանդիպումը ոչ-ոքի ավարտեց նաեւ Գերմանիայի երկրորդ հավաքականը: Օֆենբախում կայացած խաղում նա 4-4 խաղաց Ռուսաստանի հավաքականի հետ:

Ներկայացնենք նաեւ մյուս հանդիպումների արդյունքները. Հունաստան-Ռումինիա՝ 2-0, Իսրայել-Վրաստան՝ 1-1, Չեխիա-Ավստրալիա՝ 3-1, Ավստրիա-Շվեդիա՝ 1-1, Բոսնիա-Մակեդոնիա՝ 1-0, Հարավսլավիա-Չինաստան՝ 1-0, Մալթա-Հյուսիսային Իռլանդիա՝ 0-3:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Հաղթեց Վյաչեսլավ Եկիմովը

Երեք օր տեւեց Բելգիայի ճանապարհներով ընթացող ավանդական «Լա Պեն» հեծանվավազքը:

Ընդհանուր հաշվարկում լավագույն արդյունք ցույց տվեց եւ հեծանվավազքի հաղթող դարձավ ռուս մարզիկ Վյաչեսլավ Եկիմովը, որը հանդես է գալիս ամերիկյան «Պոստալ» թիմի կազմում: Եկիմովից 14 վայրկյանով ետ մնաց երկրորդ մրցանակակիր Ռոման Վայնշտեյնը (Լատվիա), իսկ երրորդը Ռուսաստանի ներկայացուցիչ Սերգեյ Իվանովն էր:

Սամվել Գեւորգյանի հուշամրցաշարը

Ավարտվեց զոհված ազատամարտիկ, Մարտական խաչի առաջին ասիճանի շքանշանակիր Սամվել Գեւորգյանի երկրորդ հուշամրցաշարը:

Բազմօրյա խճուղային հեծանվավազքի 43 մասնակիցները հինգ օրվա ընթացքում հաղթահարեցին ավելի քան 600 կմ մրցաշրջանում:

Հինգ փուլի ընդհանուր արդյունքով մրցումների հաղթող դարձավ Արսեն Ղազարյանը: Երկրորդ եւ երրորդ տեղերում են համապատասխանաբար Սամվել Հովհաննիսյանը եւ Վազգեն Ղուլիջանյանը: Գովեստի է արժանի նաեւ պատանի Տիգրան Կորկոտյանը, որն ամբողջ մրցաշրջանում հավասար պայքար մղեց փորձառուների հետ: Նա շաս մոտ էր մրցանակակիր դառնալուն, բայց այս անգամ բավարարվեց չորրորդ տեղով, ինչը նույնպես պատվաբեր արդյունք է:

ՄԱՍԱՍ

Նախորդ համարում տպագրված մրցանակային սկանվորդի պատասխանները

1. Մամուլյան: 2. Կառավարություն: 3. Բակ: 4. Ռադիան: 5. Վունդտ: 6. Հրաս: 7. Ուրան: 8. Այրիվան: 9. Թարախ: 10. Անձ: 11. Մակու: 12. Առար: 13. Շաղգամ: 14. Կայարան: 15. Նշարիկ: 16. Կծու: 17. Հուդ: 18. Լինդա: 19. Նավակ: 20. ԱԻՄ: 21. Տղա: 22. Կասու: 23. Խայծ: 24. Ծամոն: 25. Լյա: 26. Գիծ: 27. Տոսո: 28. Նաու: 29. Նար: 30. Անկ: 31. Ասաման: 32. Ասանդե: 33. Կեսար: 34. Նիստ: 35. Բանանալ: 36. Ատոմ: 37. Մական: 38. Բորենի: 39. Բուտուտ: 40. Երկաթ: 41. Դանթե: 42. Փուխ: 43. Ագվոր: 44. Ոճ: 45. Մկան: 46. Փաստ: 47. Տի: 48. Նունե: 49. Դրամատուրգ: 50. Աստ: 51. Եկ: 52. Կնիվ: 53. Դա: 54. Վա: 55. Կա: 56. Աղաթ: 57. Ակոս: 58. Ափ: 59. Աբանես: 60. Արի:



ԽԱՉԲԱՌ

Ուղղահայաց

1. Հայ դերասան, Համլետի լավագույն դերակատարը: 2. Պատվաստի համար կտրված ոստ: 3. Քաղաք Ուզբեկստանում: 4. 1912-13 թթ. Ռուսաստանում առաջացած ծայրահեղ ռեակցիոն գրական ուղղության հետեւորդ: 5. Հայկական հին ճաշատեսակ: 6. Ուսմունք մարդկային ցեղի, նրա ժառանգական հատկանիշների լավացման մասին: 10. Ռուս ուժեղագույն թենիսիստ: 11. Հայ մարտալ: 15. Լեռնաշղթա Հայաստանում: 16. Մեծ Հայքի Կորճայք նահանգի ամենախոշոր գավառը: 20. Հայ դերասանուհի: 22. Մարզագործիք: 23. Հայկական խորհրդարանի ակտիվ պատգամավորը: 24. Ֆրանսիացի բանաստեղծ: 28. Ամենաերկար գետը Լեհաստանում: 29. Ռումինական ինքնական ժողովրդական երգ:

Հորիզոնական

7. Երաժշտական գործիքները լարելիս օգտագործվող ձայնի բարձրության չափը ստուգող սարք: 8. Ճապոնացի կինոռեժիսոր, «Այրել» ֆիլմի ռեժիսորը: 9. Երկնա-մոխրավուն մետաղային հանքանյութ: 12. «Բոռ» վեպի հերոսներից: 13. Ֆրանսիացի կինոդերասանուհի, ասող _ Պարադի: 14. Գյուղ Հայաստանում, նախկինում այն կոչվել է Քյավթաղու: 17. Գյուղ Հայաստանում, որը հիմնել է Սյունյաց Սոփի տիկինը: 18. Գյուղ Բազումի լեռնաշղթայի հարավային ստորոտին: 19. Հայ դասական երգահան: 21. Այն, ինչ քաշում են քթանցքերը եւ փռշտում: 25. Օդտիկական սարք: 26. Հանդիսավոր, գովերգական ժանրի երաժշտական մեծ ստեղծագործություն: 27. Հրեա նկարիչ: 30. Սովետական մաթեմատիկոս, աշխատանքները վերաբերում են թվերի անալիտիկ տեսությանը: 31. Ծովափնյա առողջարան Ռումինիայում: 32. Տարերի պարբերական համակարգի հայտնագործողը:

Կազմեց Է. ՍՎԵՏԻՍՅԱՆԸ

Մրցանակային հաջորդ խաչբառը կտպագրվի «Ազգի» ապրիլի 15-ի համարում:
Փորձեք լուծել, եւ արժեքավոր մրցանակը Ձեզնով է:

ԵՐԵՎԱՆ

Հայկական գարունը սկսվեց ճապոնական օգնությամբ

Ճապոնական ցորենն աճուրդում

Ճապոնական կառավարությունն արդեն 4 անգամ պարենային արտադրությունը խթանելու նպատակով Հայաստանին տրամադրում է դրամաշնորհներ: Այս տարի հատկացված 310 մլն իենի շնորհիվ ձեռք է բերվել 10 հազար տոննա ազոտական պարարտանյութ, որն աճուրդային կարգով առաջիկայում կվաճառվի հանրապետության գյուղացիական կոլտնտեսություններին եւ տնտեսավարող սուբյեկտներին: Այս առիթով երեկ գյուղատնտեսության եւ բնօգտագործման նախարար Զավեն Գեւորգյանը եւ Ճապոնիայի դեսպանի (նստավայրը Մոսկվա) խորհրդական Նորիհիսո Սոնեն նամակներ փոխանակեցին:

Ընդհանուր առմամբ 1997-2000 թթ. ընթացքում ճապոնական կառավարության շուրջ 1 մլրդ 41 մլն իենի դրամաշնորհով ձեռք է բերվել 75 տրակտոր, 36 կոմբայն եւ 44289 տոննա պարարտանյութ: Վերջինիս իրացումից գոյացած գումարները, նախարար Զավեն Գեւորգյանի հավաստմամբ, օգտագործվում են գյուղատնտեսության զարգացման համար, մասնավորապես գործընկերային ֆոնդ ստեղծելու եւ դրա միջոցով բնագավառի զարգացմանը նպաստող ծրագրերի ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

ԱՐՏԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նախկին կալանավորի վարժեցրած աղավնին թմրանյութ էր հասցնում գաղութ

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանին մոտ գտնվող ուղղիչ-աշխատանքային գաղութի տարածքի վերեւով թռչելու ժամանակ բռնվել է մի աղավնի, որի թաթիկին ամրացված է եղել թմրանյութերով փաթեթիկ: Այդ մասին, վկայակոչելով Հայաստանի ՆԳՆ-ի աղբյուրներին, տեղեկացնում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը: Համաձայն հաղորդման, 5 դատվածություն ունեցող 32-ամյա Արտավազդ Մխիթարյանն իր պատիժն էր կրում գաղութում եւ ժամանակի ավելցուկն օգտագործում էր նույն թռած աղավնուն վարժեցնելու համար: Որ կեսից էլ որ բաց էին թողնում թռչունին, նա միշտ վերադառնում էր նույն պատուհանի մոտ: Լինելով փորձառու թմրամոլ, Մխիթարյանը չէր մոռացել ճաղերի եւ տեւում մնացած ընկերների մասին: Գալով Նուբարաշեն եւ մոտենալով արգելապատնեշին, նա բաց է թողել աղավնուն, որի ոտին ամրացված է եղել փաթեթիկ եւ գրություն, թե ում է հասցեագրված թմրադեղային ծանրոցը: Համենայն դեպս, որպեսզի որեւէ մեկի մտքով չանցնի սեփականացնել հեղինակային իրավունքը, երկոտոում նշվել է ուղարկողի անունը: Սակայն աղավնին դեռի իր պատուհանը թռչելու ճանապարհին նստել է հսկիչի ուսին:

Թմրամոլ-վարժեցնողը ձերբակալվել է իր հարազաս Գյումրիում: Նրան առաջադրվել է թմրանյութեր տարածելու մեղադրանք, որը ՀՀ ՔՕ-ով նախատեսում է 6-15 տարվա ազատազրկում:

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ հեռախոսային սյուների մատակարարման: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում գրանցված կազմակերպությունները եւ մատակարարները:

Մրցույթի անցկացման պայմանների, ինչպես նաեւ հեռախոսային սյուների տեխնիկական տվյալների մասին համապատասխան փաստաթղթերը կարող եք ստանալ հետեւալ հասցեով՝ Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ.՝ 28-70-66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2000 թ. ապրիլի 25-ը, ժամը 12:00:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ինտերնետ Միությունը

(ԻՄ) հայտարարում է ընդունելություն Windows NT 4.0, UNIX - Novell 4. 1 օպերացիոն համակարգերի ցանցային ադմինիստրատորների պատրաստման դասընթացների:

Դասընթացի տեւողությունն է 75 ժամ, օրական 4-5 ժամ: Դասերը անց են կացվելու ուսանողների հետ համաձայնեցված օրերին եւ ժամերին: Դասերը ավարտելուց տրվում է համապատասխան օպերացիոն համակարգի ցանցային ադմինիստրատորի սերտիֆիկատ: Ուսանողների քանակը խմբում 10-12 հոգի: Դասընթացի արժեքը $190-ին համարժեք դրամ:

Դասերը անցկացվում են Միության կենտրոնում, Փավստոս Բուզանդ 31 հասցեով, Երեւանճախագիծ ինստիտուտի բենի 7-րդ հարկում:

Մանրամասնությունները՝ 582760 հեռախոսահամարով:

USAID

AED

Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ Կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **ապրիլի 7-ին, ժամը 11:30-ին,** Թեքեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային գործընթացի կառավարման գլխավոր վարչության պետ

Դավիթ Համբարձումյանը,

ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ

Վարդան Բոսանջյանը

Թեմա՝ **«ՀՀ 2000 թ. պետբյուջեի ձեւավորման յուրահատկությունները»:**

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելությունը՝ **մագիստրոսի** կոչում շնորհող հետեւյալ ծրագրերով.

- **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
- **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ**
- **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ**

Բարձրագույն կրթությունը եւ անգլերենի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **ապրիլի 17-ը, ժամը 15⁰⁰-ը:**

Տեղեկությունների համար դիմել՝

Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ:

Հեռ.՝ 27-16-29

ՀՍՀ

1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին որպես կամավորական:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ

Հեռ. 52 27 01, 52 27 72, 52 27 88

BSC Business Support Center

Սասունցի փ. 24/2, Երեւան 375002, Հայաստան, Հեռախոս՝ 151834, 523279, 528654, 561964, 7812 (թաղամաս) bsc@bsc.am www.bsc.am

BUSINESS SUPPORT CENTER

- Գործարար խորհրդատվություն
- Գործարար դասընթացներ
- Առեւտրի խթանում եւ տեղեկատվություն
- Գործարար օրենսդրության խորհրդատվություն

ՀԵՌՈՒՏԱՍԱՏԵՍԱԿԱՐԳԵՐ

4 ապրիլ

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.10 Ի տունը
10.20 Մամուլի կրպակ
10.30 Բոհեմ
11.05 Գ/Ֆ «Անկոչ հյուրերը»
12.20 Կուլիսների ետեւում
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սեզամ. բացվիր
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 Հեռուստալոտո
20.00 Մնջախաղի թատրոն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Ֆ «Մորկային հոսանք»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
17.00 Մուլտծրագիր
17.35 Բնաբխարհ. «Բնությանը պահապան»
18.00, 20.00 Լուրեր
18.15 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Սոլթին»
19.05 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
20.35 Մարզաբխարհն անցած շաբաթ
21.10 Համերգ. Մարկ Քնոփֆլեր
21.35 Գ/Ֆ «Սովորական հրաշք»

9.00 Տոմար
10.30 Ասպարեզ (կրկնություն)
11.00 Ավետա
19.05 Չոչիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Հմայիլ
20.30 Ասպարեզ
21.10 Հրապարակ
22.05 Գ/Ֆ «Մարսը հարձակվում է»
0.35 Ակնարք
0.40 Գ/Ֆ «Քաղցր ոչինչ» (ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 Ամեն ինչ հնարավոր է
17.00 Պատանի գլադիատորները «Լեռան արքան» ծրագրում
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.30 Գուշակիր մեղեդին
20.00 Վավ. դետեկտիվ
20.45 Սերիալ «Հուշեր Շերլոկ Հոլմսի մասին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Էլդար Ռյազանովի հեղինակային ծրագիրը. Ջ. Գեորգ
23.50 Լավագույն «երգերը գլխավորի մասին»
00.55 Նորություններ
01.15 Քաղաքակրթություն
01.45 Մարտաֆիլմ «Ասեղը» (դերերում Վ. Ցոյ, Պ. Մամոնով, Ս. Սմիրնովա, Ղազախական, 1988 թ.)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.20 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
10.30 Քվանտային բժշկագիտություն
10.40 «Արենա-սպորտ»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՄՍ
13.25 Մոսկվա-Մինսկ
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց խաղաք»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.40 Երկխոսություններ կենդանիների մասին
17.35 Խանութ բազմոցի վրա
18.30 Աշտարակ
18.50 «Ռոսիա» կինոթատրոն. Վլադիմիր Իլյինը. Լիդիա Ֆեդոսեեւա-Շուկշինան «Գլխարկ» ֆիլմում
20.25 Լիակատար մոդեռն
21.45 Կինոյի ժամ. Միխայիլ Դեռժավինը. Լյուբով Պոլիշչուկը «Իմպրոտենս» ֆիլմում
23.15 «Կ-2»-ը ներկայացնում է
01.00 «Կլոր տարեթիվ». Վլադիմիր Սոշալսկի-70
01.30 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
01.45 Խանութ բազմոցի վրա

@rmineo Global Telecommunications

Համակարգչային ուսուցում ԻՆՏԵՐՆԵՏ դպրոցում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արաքելոցաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Պատվեր 1235 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 3. 04. 2000 Գինը 100 դրամ